

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Ուրեմն, ո՞վ գալիքի
երգասաններ,
ձեր ոգու տեգերով
գրահավորված՝
Տքնեցեք տքնաջան ու
հնչյուններ ցանեք՝
Հերկելով հերկերն անցյալի՝
հանուն գալիք օրվա:**

Եղիշե Չարենց

Փառատոնի կազմակերպիչների ուղերձը

Սիրելի երաժշտասերներ, մեծարգո հյուրեր և գործընկերներ

Մեծ հաճությամբ ու խորը հուզմունքով այսօր կանգնած ենք ձեր առջև՝ որպես Կապանի միջազգային երաժշտական փառատոնի կազմակերպիչներ: Երաժշտական այս բացառիկ տոնախմբության մեկնարկը տրվում է Հայաստանի գողտրիկ և, միևնույն ժամանակ, բանուկ քաղաքներից մեկում՝ Կապանում, որտեղ հուլիսյան տապը պարուրվելու է բոլորիս հոգիները ջերմացող երաժշտությամբ՝ անվանի երաժիշտների մասնակցությամբ:

Երբ մենք սկսում էինք մարտահրավերներով լի այս ճամփորդությունը, բոլորիս վարակել էր խենթության հետ միաձուլված սերն առ երաժշտություն ու մեր չքնաղ երկիր: Զենք չափազանցիկ, եթե նշենք, որ Կապանի միջազգային երաժշտական փառատոնը մեր թիմային երգանքն է: Այն վկայում է անթիվ անհատների նվիրվածության մասին, ովքեր անխոնջ աշխատել են այս տեսլականն իրականություն դարձնելու համար:

Կապանը, որը գտնվում է Սյունիքի սրտում, իր ուրույն տեղն է զբաղեցնում Հայաստանի մշակութային ժառանգության մեջ: Կապանի արվեստի պետական բոլեշի համերգասրահը, որը ժամանակին հայտնի էր որպես խորհրդային ժամանակաշրջանի լավագույն հնչողակալությունն ապահովող ենթակառուցվածքներից մեկը, վկայում է քաղաքի հարուստ մշակութային ժառանգության, ստեղծարար մտքի ու վերջինիս պահանջախնդիր սպառողի մասին: Դա հիլիճի յուրահատկության մասին են փաստել այնպիսի համաշխարհային անուններ, ինչպիսիք են Վալերի Գերգիևը, Մստիսլավ Ռոստրոպովիչը: Այնուամենայնիվ, գաղտնիք չէ, որ պրոֆեսիոնալ համերգային դաշնամուրի բացակայությունը բազմիցս խոչընդոտել է այդ դա հիլիճի ներուժի լիարժեք օգտագործմանն ու անվանի դաշնակահարների, ինչպես նաև համայնքների ելույթների հյուրընկալմանը հրաշագեղ Կապանում: Այդ դա հիլիճում փառատոնի հիմնադրի և գեղարվեստական ղեկավար, թավջութակահար Սևակ Ավանեսյանի՝ 2022 թվականի այցելությունն ու համերգը դարձան ճակատագրական. Նախ՝ նրան Կապան էր բերել նախնիների հոգու կանչը: Մյուս կողմից՝ Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի պատրաստակամությունն էր ու մեծ աջակցությունը՝ ի պատասխան Սևակ Ավանեսյանի հավակնոտ առաջարկի՝ քաղաքն ու ուսումնարանի համերգասրահ վերածելու միջազգային երաժշտական փառատոնի «թատերահարթակ»-ի: Մենք կրկին համոզվեցինք, որ ցանկացած նախաձեռնություն կարող է հաջողվել միայն այն պարագայում, երբ տան տերերն իրենք նախաձեռնության ակտիվ դերակատարներ են:

Ողջ թիմի կողմից բառացիորեն որդեգրվել է մեկ գերակա սկզբունք. անել ամենը գերազանցության անսասան ձգտումով և առանց գիջումների: Շնորհիվ ձեզ նման անհատների աջակցության, ինչպես նաև մեր թիմի հզոր կամքի ու նվիրվածության՝ մենք կարողացանք մեր աշխարհայացքով վարակել բազում գործընկերների, երաժիշտների և աջակիցների: Այս մղումը մեզ խորրոպորդ ճանապարհներով հասցրեց Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա, որտեղ մի շարք ընկերների աջակցությամբ մեզ հաջողվեց շուկայականից անհամեմատ ցածր գնով ձեռք բերել Steinway & Sons լեգենդար մակնիշի D կարգի համերգային գործիք՝ բառացիորեն եզակի հնչողությամբ, ինչպես փաստեցին տեղում մեր երաժիշտ գործընկերները: Մեր հատուկ երախտագիտությունն ենք

4 ՀՈՒՆԻՍԻ 2023 Թ.

Շարունակությունը՝ էջ 12



K A P A N
INTERNATIONAL
M U S I C
F E S T I V A L

04-14
ՀՈՒՆԻՍԻ

ԿԱՊԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ. աննախադեպ իրադարձությունն Սյունիքի հոգևոր- մշակութային կյանքում



ձույթուն է: Շուրջ 10 օր Կապանը լինելու է երաժշտական տարատեսակ միջոցառումների կիզակետում և համախմբելու է երաժիշտների՝ հանրապետության բոլոր տարածաշրջաններից, մայրաքաղաք Երևանից:

Մեր գեղեցիկ բնաշխարհը հյուրընկալելու է նաև աշխարհահռչակ երաժիշտների տարբեր երկրներից: Ես՝ որպես համայնքի ղեկավար, չափազանց կարևորում և ողջունում եմ փառատոնի անցկացումը հատկապես ներկա իրավիճակում՝ լիահույս լինելով, որ այն նոր ակտիվություն կբերի և թարմ շունչ կհաղորդի համայնքի մշակութային կյանքին:

Մշակույթը այցեքարտ դարձնելու ուղին բռնած Կապանի համար սա հիանալի հնարավորություն է նոր կապերի հաստատման, փորձի և գիտելիքների փոխանակման, մշակութային կամուրջների ստեղծման, և, իհարկե, Կապանն աշխարհին ավելի ճանաչելի դարձնելու տեսանկյունից: Համոզված եմ՝ փառատոնը մեծ հաջողություն է ունենալու և անկրկնելի տպավորություններ է պարգևելու բոլոր մասնակիցներին:

**Կապանի
համայնքապետ
ԳԵՎՈՐԳ
ՓԱՐՍՅԱՆԻ
ՈՂՋԵՐԹԻ ԽՈՍՔԸ**

Հարգելի հայրենակիցներ
2023 թվականի հուլիսի 4-ից 14-ը Հայաստանի հարավային մայրաքաղաք Կապանում անցկացվող միջազգային երաժշտական փառատոնը համայնքի մշակութային կյանքում, հիրավի, բացառիկ իրադարձություն է:

ՍԼԱԿ ԱՎԱՆԵՍՅԱՆ.

«Կապանի երաժշտական փառատոնը լինելու է ավանդական...»

Հարցազրույց թավջութակահար, Կապանի միջազգային երաժշտական փառատոնի նախաձեռնող և զեղարվեստական ղեկավար Սևակ Ավանեսյանի հետ:

- Հարգելի Սևակ, նախ, «Սյունյաց երկիրը» շնորհավորում է Ձեզ՝ փառատոնի փայլուն ընթացքի և ավարտի կապակցությամբ: Հիրավի, աննախադեպ իրադարձություն էր, և հույս կարողացաք կազմակերպական բարձր մակարդակով ապահովել ընթացքը՝ առաջին օրվանից մինչև վերջ:

– Չէի ասի, որ ամեն ինչ հեշտ ու հանգիստ ստացվեց: Ամեն տեղ, որտեղ հնարավոր է ունենալ ինչիոր, ունեցանք, սկսած դաշնամուրի մաքսագերծումով: Ամեն պահի կարող էր այդ ամենը փլուզվել: Որքան էլ ունեինք հզոր երաժիշտներ և թիմ, ասես առաջնագծով էի գնում, և եթե ինձ հետ մի բան պատահեր, ապա ամեն ինչը կփլվեր: Դաշնամուրի հետ մի բան պատահեր, ամեն ինչին վերջակետ կդրվեր: Խոչընդոտներ շատ եղան: Գալիս ենք, տեղ ենք հասնում, պարզվում է՝ դուռը փակ է: Ասում են՝ հինգ րոպեից կբացեն, երեք օրից են բացում: Բայց այդ ամենով հանդերձ՝ ունեցանք փառատոն, որը, ըստ իս, աշխարհի ամենահեղինակավոր փառատոնից՝ իմ պատկերացմամբ, լավ էր կազմակերպված:



Այսօր խոսում էինք Կապանի համայնքապետի տեղակալի հետ (*խմբ. հարցազրույցը կայացել է հուլիսի 15-ին*)՝ կապանցի հանդիսատեսի առջնությունը, Նշեցի, որ կապանցի հանդիսատեսն ավելի բարձր մակարդակ ունի, քան մեկ այլ տեղ: «Կանոնադրի» համերգի ժամանակ մարդիկ հագում են, խոսում են, իսկ Կապանի երգեհոնային դահլիճում մարդիկ բար լռության մեջ ունկնդրում են երաժշտությունը: Իհարկե, առաջին պլանին երաժիշտներն են: Միշտ մի օրինակ են բերում. եթե խոհարարին տալիս են լավորակ միս, բանջարեղեն և համեմունքներ, ընտիր ուտելիք է պատրաստում: Իսկ ո՞վ է շահում դրանից: Ուտողը: Ասելու այն է, որ մեր երաժիշտներին ցույց տվեցինք ամենաբարձր ընդունելությունը, նվազելու համար ունեցան ամենալավ դաշնամուրը, բարձր ակուստիկա ունեցող դահլիճը: Եվ նրանք նվագեցին իրենց հնարավորություններից մի բան էլ առավել: Իսկ ո՞վ շահեց դրանից՝ ունկնդիրը: Մինչդեռ ամբողջ աշխարհում արվում է հակառակը: Երաժշտին շատ փող են տալիս, բայց մարդկային վերաբերմունքը պակասում է: Այստեղ մեր երաժիշտներն ընկերացել էին կապանցի ունկնդրի հետ: Չանգում, հարցնում են ո՞ր ես, պատասխանում է՝ այսինչի տանը հյուրավարության եմ: Մի բանի ժամ առաջ փառատոնի կրտսեր մասնակիցներին ճանապարհեցի մայրաքաղաք, լաց լինելով հեռացան այստեղից: Ասում էին՝ Կապանը մեզ շատ է դուր եկել:

Շարունակությունը՝ էջ 10



Երաժշտական փառատոնի բացումը. 4 ՀՈՒՆԻՍԻ 2023 Թ.

Հեռավոր 1976-ին Կապանի երաժշտական ուսումնարանում առաջին անգամ ինչեզ երգեհոնային երաժշտություն: Երկար դեգերումներից հետո կապանյան մշտական գրանցում ստացավ գերմանական «E.F. Waleher» ֆիրմայի արտադրության գործիքը: Եվ ահա տասնամյակներ հետո երգեհոնային դահլիճը ևս մի համարում է ունենում «Steinwat D 274» կարգի եզակի ինչ-որ բանով դաշնամուր: Այս նախաձեռնության ակունքներում է կանգնած արմատներով կապանցի, միջազգային մրցույթների դափնեկիր, ճանաչված թավջութակահար Սևակ Ավանեսյանը: Ավելի ստույգ՝ նրա ջանքերի և նվիրումի շնորհիվ կապանյան գրանցում ստացավ երաժշտական այդ եզակի գործիքը:

Այս հաճելի իրադարձությունը զուգորդվեց Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում միջազգային փառատոնի անցկացման հետ, որի բացումը կայացավ հուլիսի 4-ին: Այն իրականությունը դարձավ Կապանի համայնքապետարանի և Չանգեզուրի պղնձամուրիբոլենային կոմբինատի աջակցության շնորհիվ: Ամռան այդ երեկո երգեհոնային դահլիճում էին հավաքվել դասական երաժշտության երկրպագուներ՝ այս անգամ ունկնդիրը լինելու դաշնամուրային համերգի: Դահլիճում էին միջազգային ճանաչում ունեցող երաժիշտ կատարողներ, նաև օտարազգի Էռնեստ Բիթերը, ով շուկայականից անհամեմատ ցածր գնով համաձայնվեց Կապան ուղարկել այդ գործիքը և եկել էր տեսնելու, թե դաշնամուրն ինչպես է տուն հասել:

Բենահարթակ իրավիճակներ փառատոնի նախաձեռնող խմբի անդամներ՝ Կարմիր խաչի կոմիտեի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Չառա Ամատունին, Սևակ Ավա-



նեսյանն ու Հայկ Աբելյանը՝ դաշնամուրների վերանորոգման և պահպանման լավագույն և եզակի վարպետ: Երախտագիտություն հայտնվեց դաշնամուրի ձեռք բերման նպատակով կազմակերպած հանգանակության բոլոր մասնակիցներին և աջակիցներին՝ հայկական բարեգործական ընդհանուր միությանը, մասնավորապես տիկին Նադյա Գործունյանին, ովքեր ծանրակշիռ ներդրում ունեն գործիքը Կապանում ունենալու համար:

Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը ողջունեց հյուրերին Կապանում գտնվելու և փառատոնի մասնակցության առիթով՝ նշելով, որ փառատոնը Կապանի մշակույթային կյանքում եզակի ու նշանակալի իրա-

դարձություն է և իր շուրջն է համախմբել երաժիշտներ՝ ինչպես հանրապետությունից, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներից: Համայնքի ղեկավարը հանդուսնաբ հայտնեց, որ փառատոնը և նման արժեքավոր դաշնամուրի ձեռք բերումը նոր ազդակ կլինեն համայնքում երաժշտական կյանքն էլ ավելի աշխուժացնելու համար և անմոռանալի տպավորություններ կպարգևեն կապանցի հանդիսատեսին, ով մշտապես տարբերվել է դասական երաժշտության հանդեպ ընդգծված ճաշակով ու վերաբերմունքով:

Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից անցկացվող «Տաղանդների բացահայտում» մրցույթի դափնեկիրների կատարումներով զարդարվեց փառատոնը: Չտոտ հանդես եկան անվանիները. միջազգային ճանաչում ունեցող դաշնակահարուհի Աննա Սարկիսովան, ով գործիքն անձամբ փորձարկեց Վիեննայում և հաստատեց, որ այն լավագույնն է: Այնուհետև հանդես եկան դասական երաժշտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մեր հայրենակից, արմատներով կապանցի Արմեն Քարամյանը, Քրիստինա Երբայի Փափագյանը և Ուրսուլա Վոն Լերբերը: Համերգի ավարտին հանդիսատեսին անակնկալ էր սպասվում՝ երկու դաշնամուրներով այս վիրտուոզ երաժիշտները հանդես եկան միասին:

Նրանք իսկական տոն պարզեցին կապանցի երաժշտասերներին: Համեստ այն դեպ վերջիններս բավականության զգացումով հեռացան դահլիճից՝ փառատոնի ծրագրով անցկացվող մյուս համերգների մասնակիցը լինելու մտադրությամբ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



ՓԱՌԱՏՈՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ՝ սիմֆոնիկ անմոռաց համերգով



Կապանի միջազգային երաժշտական փառատոնի համերգային երկրորդ օրն արվեստի բոլոր երգեհոնային դահլիճը լեվ-լեցուն էր: Երաժշտասերը եկել էր բարձրակարգ երաժշտություն ունկնդրելու ակնկալիքով, ինչը միանգամայն իրականություն դարձավ: Բեմահարթակում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն էր (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան): Համերգային ծրագրի սկզբում հնչեց Սոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայի նախերգանքը, դաշնամուրի և նվագախմբի համար գրված N 21 դո մաժոր կոնցերտը: Այնուհետև հնչեց Մարտին Ուլիխանյանի «Հայկական ռապսոդիան»՝ թավջութակի և լարայինների համար, արիաներ Սոցարտի, Ջամոկո Պուչինիի և Ալֆրեդո Կատալինիի «Վալի» օպերաներից: Հանդիսատեսը հատկապես բուռն ծափոջուցումներով և օվացիայով վարձատրեց նվագախմբին, որը կատարեց Արամ Խաչատրյանի «Վալսը»՝ Միխայիլ Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի համար գրված երաժշտությունից: Եվ որպես հավարտ համերգի՝ հնչեց մի գեղեցիկ ստեղծագործություն՝ Առնո Բաբաջանյանի «Սերենադը»՝ Մարտին Ուլիխանյանի մշակմամբ: Համերգային երեկոյին հանդիսատեսը ծաղիկներով և սրտաբուխ ծափերով ող-



ՍԵՐԳԵՅ ՍՄԲԱՏՅԱՆ
Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր

ջունեց մենակատարներին՝ Մարիանա Շիրիկյանին (դաշնամուր), Լյանա Ուլիխանյանին (թավջութակ), Լիանա Ալեքսանյանին (սոպրանո), Տիգրան Ավագյանին (շեփոր): Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի բարձրակարգ կատարումների աստվածային մեղեդիները երկար կողոպտեցին կապանցի հանդիսատեսի ունկնդրում: **ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
07.07.2023 Թ.

Կապանի միջազգային երաժշտական փառատոնի համերգային երրորդ օրվա ազդագիրը հրավիրում էր կամերային երաժշտության երեկոյի: Բայց և հանդիսականին անակնկալ էր սպասվում: Փոքր-ինչ փոխվել է փառատոնի ձևաչափը: Նախ բեմ հրավիրվեցին երգչուհի Լիանա Ալեքսանյանը, դաշնակահարուհիներ Աննա Սարկիսովան և Մարիանա Շիրիկյանը, ովքեր հանդես եկան փառատոնի առաջին օրերի տպավորություններով, երեխաների հետ անցկացրած վարպետաց դասերի վերաբերյալ կարծիքների փոխանակմամբ, ինչպես նաև ներկայացրին դրվագներ՝ արտասահմանում իրենց մասնագիտական գործունեությունից: Հաղիսատեսները հարցեր ուղղեցին ճանաչված երաժիշտներին: Այնուհետև բեմահարթակում դաշնակահար Արմեն Քարամյանը, ջութակահար Կարեն Շահալոյանը, թավջութակահար Դավիթ Եժով-Յավրույանն էին, ովքեր կատարե-

ցին Սերգեյ Ռախմանինովի «Էլեգիական տրիոն»: Կատարողական արվեստի բարձր նմուշ ցուցադրեցին Անուշ Նիկողոսյանը (ջութակ), Հայկ Մելիքյանը (դաշնամուր), ովքեր հնչեցրին Օլիվիե Մեսիանի, Հենրի Քոուելի և Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները: Հաջորդ ստեղծագործությունը, որ հնչեց դաշնակահարուհի Աննա Քարսենյանի, ջութակահար Կարեն Շահալոյանի, կլառնետահար Արսեն Գրիգորյանի կատարմամբ, Արամ Խաչատրյանի «Տրիո դաշնամուրի, ջութակի և կլառնետի համար» ստեղծագործությունն էր: Դաշնակահար Հայկ Մելիքյանի կատարմամբ հնչեց Հարություն Դելալյանի «Նվիրում Կոմիտասին» (սոնատ դաշնամուրի համար) ստեղծագործությունը, որից հետո Դմիտրի Շոստակովիչի N 2 միտր դաշնամուրային տրիոն՝ Հայկ Մելիքյանի (դաշնամուր), Անուշ Նիկողոսյանի (ջութակ) և Սեակ Ավանեսյանի (թավջութակ) կատարմամբ: Հանդիսատեսն առավել քան տպավորված էր երաժիշտների կատարողական բարձր արվեստով ու երկար ծափահարում էր՝ թույլ չտալով, որ երաժիշտները թողնեն բեմը. նրանք էլ՝ որպես «բիս», հնչեցրին Ալֆրեդ Շնիտկեի «Տանգո հոգեբուժարանում» ստեղծագործությունը: Կապանյան՝ Նախօրինակը չունեցող փառատոնը շարունակվում է՝ նորանոր անակնկալներ մատուցելով երաժշտասերներին: **ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
09.07.2023 Թ.





Երաժշտական փառատոն. ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Փառատոնի 4-րդ օրվա ձևաչափը նույնն էր, ինչ նախորդ օրվանը: Նախ բեմահարթակում փառատոնի երեք մասնակիցներն էին՝ Արմինե Գրիգորյան՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր, Կարեն Շահգալոյան՝ «Պարբո Սարասատեի» միջազգային մրցույթի դափնեկիր, ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Սևակ Ավանեսյան՝ թավջութակահար, ովքեր ներկայացրին իրենց տպավորությունները, այնուհետև պատասխանեցին հարցերին: Մասնավորապես, առաջարկություն եղավ, որ փառատոնը որևէ անվանում ունենա: Սևակ Ավանեսյանը նշեց, որ փառատոնը կոչվում է Կապանի միջազգային երաժշտական փառատոն, և դրանով ամեն ինչ ասված է:

Տարին խաչատրյանական է, լրանում է աշխարհահռչակ կոմպոզիտորի 120-ամյակը, որով ևս պայմանավորվեց Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրենի խոսքը, ով մասնավորապես նշեց, որ հաճելիորեն կարելի է ընդունել այն փաստը, որ օրվա համերգի առաջին հատվածում կհնչեն մատչելի ստեղծագործություններից:

Համերգի սկզբում հնչեց Արամ Խաչատրյանի «Տոկատո» և Էգիսայի պարը «Սպարտակ» բալետի» դաշնակահար Հայկ Մելիքյանի կատարմամբ: Այնուհետև Արմինե Գրիգորյանը (դաշնամուր) և Կարեն Շահգալոյանը (ջութակ) հանդիսականին մատուցեցին խաչատրյանի երկու ստեղծագործություններ՝ «Նոկտյուրն ջութակի և դաշնամուրի համար» ու «Պար ջութակի և դաշնամուրի համար», հնչեց նաև «Սյուիտ երկու դաշնամուրի համար»-ը՝ դաշնակահարուհի-

Տարին խաչատրյանական է, լրանում է աշխարհահռչակ կոմպոզիտորի 120-ամյակը, որով ևս պայմանավորվեց Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրենի խոսքը, ով մասնավորապես նշեց, որ հաճելիորեն կարելի է ընդունել այն փաստը, որ օրվա համերգի առաջին հատվածում կհնչեն մատչելի ստեղծագործություններից:



Ներ Սոնա Բարսեղյանի և Արմինե Գրիգորյանի կատարմամբ: Հանդիսականին անակնկալ էր սպասվում կատարվեց խաչատրյանի «Սունետով պարի» փոխադրումը ութ ձեռքի համար: Համերգային երկրորդ մասում երիտասարդ դաշնակահար Արմեն Պուշինյանի կողմից կատարվեց Լիստի ստեղծագործությունը՝ «Մեֆիստո-վալս № 4», այնուհետև՝ Շոստակովիչի «Սոնատ թավջութակի և դաշնամուրի համար» (դաշնամուր՝ Մարիաննա Շիրիյան, թավջութակ՝ Ալեքսանդր Շիրիյան-Ռոդե): Հաճելի էր լսել Մանգանի «Ռոմանսը»՝ 12-ամյա սաքսոֆոնահար Միքայել Հարությունյանի կատարմամբ: Համերգի ավարտին հնչեց Մոցարտ՝ «Լարոային կվինտետ № 4 սոլ միևնույն» (Հայկ Ղազարյան՝ առաջին ջութակ, Հրաչյա Ավանեսյան՝ երկրորդ ջութակ, Արմեն Ղազարյան՝ առաջին ալտ, Անդրեյ Գրիգորյան՝ երկրորդ ալտ, Դավիթ Եժով-Յավրույան՝ թավջութակ): Զորմասանի մի ստեղծագործություն, որը տևական ժամանակ հաճելի զգացողության մեջ պահեց հանդիսականին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
09.07.2023 Թ.



Ձախից երրորդը՝ դաշնակահար Հայկ Մելիքյանը



Մարիաննա Շիրիյան

Երաժշտության կախարդական աշխարհում. ՓԱՌԱՏՈՆԻ 5-ՐԴ ՕՐԸ

Այս անգամ ևս երաժշտական օրվա ծրագիրը մեկնարկեց դահլիճի հետ ավանդական երկխոսությամբ: Բեմահարթակում դաշնակահարներ էին՝ միջազգային մրցույթների դափնեկիր Հայկ Մելիքյան, որա պրոդյուսեր՝ Ալեքսանդր Պլատոն Զակոբյան, մեր հայրենակից Արմեն Զարմայան: Հայկ Մելիքյանը, մասնավորապես, խոսեց երաժշտական կրթություն ստանալու մանրամասների մասին: Այս անգամ ևս համերգը մեկնարկեց պատանի երաժիշտների ելույթներով: Մենուա Մելիք-Հայկազյանը հնչեցրեց Գաբրիել Ֆորթի «Օրորոցայինը»: Այնուհետև Կիմա Օհանյանը դաշնամուրով կատարեց Ռախմանինոյի «Ալտ Մարիաննա» մի անգամ էլ ներկաներին տեղափոխելով հնչյունների կախարդական աշխարհ: Դրանից հետո բեմահարթակում դաշնակահար Հայկ Մելիքյանն էր, ում հանդիսատեսն արդեն ճանաչում է նախորդ օրերի ելույթներից: Վիրտուոզ երաժիշտը կատարեց Շոպենի երեք վալսերը և «Պուրնետը», ինչպես նաև Ֆերենց Լիստի «Հունգարական ռապսոդիան»: Այնուհետև հանդիսատեսն ունկնդիրը

եղավ լայնակտավ մի ստեղծագործության՝ Ֆելիքս Մենդելսոնի «Լարային օկտետ մի բեմով մաժոր» (Հրաչյա Ավանեսյան՝ առաջին ջութակ, Հայկ Ղազարյան՝ երկրորդ ջութակ, Արմեն Պուրոյան՝ երրորդ ջութակ, Կարեն Շահգալոյան՝ չորրորդ ջութակ, Արմեն Նազարյան՝ առաջին ալտ, Անդրեյ Գրիգորյան՝ երկրորդ ալտ, Սևակ Ավանեսյան՝ առաջին թավջութակ, Դավիթ Եժով-Յավրույան՝ երկրորդ թավջութակ): Համերգի երկրորդ հատվածում հանդես եկավ ընտանեկան զույգ՝ դաշնակահարուհի Մարիաննա Շիրիյանի դուստրը հնչեցրեց Մոնիի «Չարդաշը» մոր նվագակցությամբ: Լիլիթ Մարտիրոսյանը կատարեց Ալբերտո Յիլաստերիայի «Երեք արգենտինական պար» ստեղծագործությունը, այնուհետև բեմահարթակում էին Լիանա Ալեքսանյանը (տապան), Սևակ Ավանեսյանը (թավջութակ), Աննա Մարկիսովան (դաշնամուր): Հնչեցին Ժյուլ Մասնե՝ «Էլեգիա» և Ռիխարդ Շտրաուս՝ «Morgen» ստեղծագործությունները: Ի հավելումն նշեք, որ փառատոնի յուրաքանչյուր օր Կապանի արվեստի պետական թուղթի Կահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում հանդիսատեսի պակաս չի լինում, ինչը վկայում է կապանցու սերն ու հակումը դասական երաժշտության հանդեպ: **ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
10.07.2023 Թ.



Փառատունն ավելի բազմաժանր է դառնում. ՕՐ ՅՈԹԵՐՈՐԴ

Փառատունի 7-րդ օրվա ծրագրով նախատեսված միջոցառումներն անցկացվեցին երեք հասցեում: Նախ՝ Կապանի ժամանակակից արվեստի թանգարանում տեղի ունեցավ «Յնչյունի ներքո» խորագրով արվեստի գործողություն, որը գեղարվեստի և երաժշտության մի ինքնատիպ միաձուլում էր: Ջազային երաժիշտ, դաշնակահար Կարեն Մամիկոնյանի հնչեցրած մեղեդիների ներքո նկարիչ և շեփորահար Յայկ Գրիգորյանը կտավի վրա ստեղծեց արվեստի գործ:

րային երաժշտության ունկնդրում: Բայց մինչ այդ՝ Յայկական բարեգործական ընդհանուր միության «Տաղանդների բացահայտում» մրցույթի դափնեկիր Ավետա Յակոբյանը կապանցի հանդիսատեսին արդեն բաջածանոթ վիրտուոզ դաշնակահար Յայկ Մելիքյանի հետ կատարեց Բաբաջանյան-Յարությունյանի «Յայկական



ՅԱՄԻԿ ՊԱՊՅԱՆ
օպերային երգչուհի, 33 ժողովրդական արտիստ

նապտոհիս»: Եվս մի դաշնակահարային ստեղծագործություն հնչեց դեռատի Մարիա Ներսիսյանի և ճանաչված դաշնակահարուհի Մարիանա Շիրինյանի կատարմամբ: Դրանից հետո բեմահարթակում մենակատարներ՝ երիտասարդ

ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐԸ ԵՐԱԺՇՊԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՒՆՈՒՄ

Փառատունում ձևավորված ավանդույթի համաձայն՝ հանդիսատեսը նախ շփվեց երեք երաժիշտ կատարողների հետ՝ Անդրեյ Գրիգորյան՝ ալտահար, Արմեն Նազարյան՝ բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր, ճանաչված ալտահար, մի շարք հեղինակավոր նվագախմբերի մենակատար, այտի միջազգային մրցույթների դափնեկիր, Յայկ Ղազազյան՝ ջութակահար, միջազգային մի շարք հեղինակավոր մրցույթների դափնեկիր: Ճանաչված երաժիշտները հետաքրքրական մտքեր արտահայտեցին երաժշտության՝ ունկնդրի վրա թողած բարերար ազդեցության մասին և պատասխանեցին հանդիսատեսների հարցերին:

գործիքներ: Սեն Սանը արգելեց եր ստեղծագործությունը կատարել իր կենդանության օրոք, որ անլուրջ կոմպոզիտորի անուն չվաստակի: Իր մահից հետո այն այլևս չի չի արվում և դարձավ տարբեր նվագախմբերի ամենասիրելի գործերից մեկը: Ստեղծագործությունը համեմատված է հումորով, երբեմն փոխակերպվում է սատիրայի, կրկնօրինակում որոշ ստեղծագործություններ՝ տալով դրանց այլ հումորային հնչերանգ: Նվագախումբն այլ նպատակ ուներ. այս գործով ոգևորել ամենակրտսեր հանդիսատեսին: Տեսնելով ակտիվ արձագանքները՝ կապանցի հանդիսատեսին ևս դուր եկավ Սեն Սանի ստեղծագործությունը:

Փառատունում ձևավորվել է մեկ այլ ավանդույթ ևս. համերգային ծրագիրը մեկնարկել էրիտասարդ ու տաղանդավոր երաժիշտների կատարումով: Այս անգամ հնչեց Մոցարտի «Դաշնամուրային կվարտետ համար 1 սոլ միևր» ստեղծագործությունը (դաշնամուր՝ Լիլիթ Մարտիրոսյան, ջութակ՝ Ալեքսանդրա Յայրապետյան, այտ՝ Անդրեյ Գրիգորյան, թավջութակ՝ Էլեն Պողոսյան):

Յամերգին մասնակցում էին «Չանգեզուրի պղնձամուլիբենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուրդոյիցը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, որոնք բարի կամեցողությամբ է հնարավոր դարձել միջազգային նման փառատունի անցկացումը:
ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ, 11.07.2023 Թ.

Այնուհետև հանդիսականն ունկնդրեց ավելի լայնակտավ ստեղծագործություններ. Շոստակովիչ «Յիշողություն Ֆյոդենցիայի մասին»՝ մենակատարներ Յայկ Ղազազյան՝ առաջին ջութակ, Յրաչյա Ավանեսյան՝ երկրորդ ջութակ, Անդրեյ Գրիգորյան՝ առաջին այտ, Արմեն Նազարյան՝ երկրորդ այտ, Սևակ Ավանեսյան՝ առաջին թավջութակ, Դավիթ Եժով-Յավրուսյան՝ երկրորդ թավջութակ:



Այնուհետև հնչեց Ֆրանց Շուբերտ-Das Forellen Quintett հինգ մասանի ստեղծագործությունը, մենակատարներ՝ Յրաչյա Ավանեսյան՝ ջութակ, Անդրեյ Գրիգորյան՝ այտ, Սևակ Ավանեսյան՝ թավջութակ, Յայկ Խաչատրյան՝ կոնտրաբաս, Մարիանա Շիրինյան՝ դաշնամուր: Յաջորդիվ հնչած ստեղծագործությունը երաժշտական կատակ էր՝ Կամիլ Սեն Սանս, «Կենդանիների ջբահանդես»: Նվագախումբն էլ պատկառելի կազմ ուներ. Աննա Սարկիսովա՝ առաջին դաշնամուր, Արմեն Քարամյան՝ երկրորդ դաշնամուր, Յրաչյա Ավանեսյան՝ առաջին ջութակ, Յայկ Ղազազյան՝ երկրորդ ջութակ, Արմեն Նազարյան՝ այտ, Սևակ Ավանեսյան՝ թավջութակ, Յայկ Խաչատրյան՝ կոնտրաբաս, Լարել Ավագյան՝ ֆլեյտա, Արսեն Գրիգորյան՝ կլառնետ, Արման Աղաջանյան՝ հարվածային

տեսնող Արամ Մամիկոնյանն էր և դաշնակահարուհի Արուսյակ Ռշտունին: Սեկ ժամից ավելի հանդիսականը վայելեց Վիլիելմ Մյուլլերի բանաստեղծությունների հիման վրա գրված Ֆրանց Շուբերտի «Ձմեռային ճանապարհ» երգաշարը:

Յամերգային ծրագրի հաջորդ հասցեն Կապանի մշակույթի կենտրոնն էր. ծրագրի առաջին հատվածի ավարտից հետո հանդիսատեսը տեղափոխվեց մշակույթի կենտրոնի դահլիճ, որտեղ վայելեց անաղարտ հայկական երաժշտության՝ 2010 թվականին Լորայր Քարտաշյանի կողմից հիմնադրված «Մենուա» նվագախմբի կատարմամբ: Նվագախումբն ներառված էին հայկական ֆոլկլորային ստեղծագործություններ: Երաժշտախումբը ներկայացնում է հայկական փողային նվագարանների հինգ տեսակ՝ դուդուկ, բլուր, շվի, պարկապզուկ և գուռնա: Գրավիչն այն էր, որ նվագախումբում ընդգրկված էին երիտասարդ երաժիշտ կատարողներ, ովքեր տիրապետում են հայկական հինավուրց երաժշտական գործիքներին և ներկայացնում ազգային հարուստ ժառանգությունը: Ասել է թե՛՝ նոր շունչ են հաղորդում ժողովրդական հինավուրց գործիքներին:

Յանդիսատեսին հաճելի անակնկալ էր սպասվում՝ օպե-

Երաժշտական փառատոնը մոտենում է վերջնագծին



Փառատոնի շրջանակում Կապանի արվեստի պետական թուեջի երաժշտական դպրոցների, արվեստի մասնական դպրոցի դահլիճներում անցկացվում են վարպետաց դասեր: Միջազգային ճանաչում ունեցող բարձրակարգ երաժիշտ կատարողները՝ Զասմիկ Պապյան, Զայկ Մելիքյան, Մարիաննա Շիրիկյան և ուրիշներ, փորձում են նոր հմտություններ փոխանցել մանուկներին, ծանոթացնել երաժշտության զարգացման նորոթյա միտումներին:

Փառատոնի յոթերորդ օրը մեկնարկեց Կապանի արվեստի պետական թուեջի երգեհոնային դահլիճում, վարպետաց դասերի մասնակից սաների ելույթներով, որոնք որոշակի պատկերացում տվեցին նրանց կատարողական ունակությունների մասին: Փառատոնը երաժշտական էր, բայց ծրագրի մեջ ընդգրկված էր նաև գրքի քննարկում: «Կապանի ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում տեղի ունեցավ միջազգային ճանաչում ունեցող բանաստեղծուհի, հոգեբան Սոնա Վանի «Հայրս ասում էր» գրքի շնորհանդեսը: Ժողովածուն ընդգրկում է նրա՝ վերջին տարիներին գրած բանաստեղծությունները և արտացոլում տասնամյակներ ի վեր արտերկրում հայտնված մարդու մտորումներն ու մտահոգությունները: Միջոցառմանը մասնակցում էին գրքասերներ, կապանցի ստեղծագործողներ: Անկեղծ զրույց ծավալվեց պոեզիայի զարգացման ժամանակակից միտումների շուրջ:

Մինչև միջոցառումը, Կապանի համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանն ընդունեց հայտնի բանաստեղծուհուն, ներկայացրեց վերջին ժամանակները Կապանում իրականացված բարեփոխումները: Սոնա Վանը շնորհակալություն հայտնեց Կապանի համայնքապետին, առանց ում նվիրումի և հետևողականության երաժշտական միջազգային փառատոնի անցկացումը Կապանում կարող էր մնալ որպես երազանք:

Փառատոնում հերթը նաև ջազային երաժշտությանը հասավ: Երեկոյան Կապանի մշակույթի կենտրոնի դահլիճում ջազային երաժշտության համերգ էր, որից առաջ ջազմեն, շեփոհար Տիգրան Սուլյանը և դաշնակահար Կարեն Սիմոնյանը փառատոնից տպավորություններ ներկայացրին հանդիսատեսին ու պատասխանեցին նրանց հարցերին: Ելույթ ունեցան՝ «Dialog Music Project», «New Quintet» խմբերը: «New Quintet» խումբը ստեղծվել է 2015 թվականին մի խումբ երաժիշտների էքսպրիմոտ համերգից հետո: Խումբը ներկայանում է contemporary, modern jazz երաժշտական ոճերում: Այն ունի իր յուրահատուկ ոճը, բառի դր ներկայացնում է հիմնականում խմբի երաժիշտների ստեղծագործությունները:

«Dialog Music Project»-ը հիմնադրել է շեփոհար Տիգրան Սուլյանը 2018 թվականին: Խմբի երաժշտությունը ջազի, հիփ-հոփի, բալադային ֆոլկլորի միաձուլումն է, երկխոսությունը՝ բազմակողմանի, բազմերանգ ու հնչեղ:

Կապանի հանդիսատեսը երկար ժամանակ մշակույթի կենտրոնի բեմահարթակից չէր լսել ջազային երաժշտություն և ջերմ ծափողույցներով էր վարձատրում երաժիշտների յուրաքանչյուր կատարումը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
13.07.2023 Թ.



Փառատոնը եկավ, որ ավելի հաստատուն դարձնի Կապանի մերօրյա ընթացքը

Կապանի միջազգային երաժշտական փառատոնի փակումը ևս վերածվեց սրտամոտ ու անմոռաց հանդիսության: Եվ դարձյալ լեփ-լեցուն դահլիճ: Զանդիսատեսների հայացքում ափսոսանք կարելի էր կարդալ, որ հրաժեշտ են տալիս բարձրակարգ երաժիշտներին: Եզրափակիչ համերգը մեկնարկեց մրցանակների հանձնումով, որը վերապահվեց երեխաների հետ վարպետաց դասեր անցկացրած ջազմեն Տիգրան Սուլյանին, «Մենուս» խմբի հիմնադիր Նորայր Քարտաշյանին և փառատոնը նախաձեռնող ու գեղարվեստական ղեկավար Սևակ Ավանեսյանին:

Փոքրիկ երաժիշտները խրախուսվել են ամերիկահայ բանաստեղծուհի Սոնա Վանի, կապանցի ամերիկաբնակ երգչուհի Մարիաննա Պետրոսյանի, ՀԲՍՀ Ամերիկայի և Եվրոպայի նախագահ Նադիա Գործունյանի և այլ բարերարների բարի կամեցողության ու հովանավորության շնորհիվ սահմանված դրամական պարգևներով և միանվագ կրթաթոշակներով:

Սևակ Ավանեսյանը եզրափակիչ խոսքում նշեց, որ ավարտվեց Կապանի առա-

Արտոթունջերյաջյան



ջին միջազգային փառատոնը՝ ակնարկելով, որ երկրորդը, անկասկած լինելու է, ասել է թե՛ միտում կա, որ փառատոնը դառնա ավանդական: Նաև հավելեց, որ շատ էին ցանկանում մի նվեր մատուցել Կապանին, և դա եղավ եզակի հնչողություն ունեցող դաշնամուր:

Այնուհետև բեմահարթակում ջազային եռյակն էր՝ դաշնակահար, կոմպոզիտոր Կարոյան Զովսեփյան, թավջութակահար Արտյոմ Մանուկյան և Կարեն Քոչարյան (հարվածային գործիքներ): Առանձին կատարումների ընթացքում նրանց միացան Սևակ Ավանես-

յանը, Նորայր Քարտաշյանը, ճանաչված երգիչ Արտոթունջերյաջյանը:

Կապանի միջազգային երաժշտական փառատոնով մնայուն էջ գրվեց բաղաբեկ մշակույթի կյանքում: Ավելի ստույգ՝ փառատոնը եկավ, որ խախտի Կապան տան նահապետական անդրորդը: Ուստի համերգի ավարտին երախտագիտության խոսք ասվեց բոլոր նրանց, ում նվիրումի ու ջանքերի շնորհիվ փառատոնն իրականություն դար-



ձավ, մասնավորապես Կապանի համայնքապետարանին, համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին, Կապանի մշակույթի կենտրոնի, Կապանի արվեստի պետական թուեջի անձնակազմին: Եվ ինչպես նաև՝ Կապան տան դասական երաժշտությունը հարգող ունկնդրին: Ինչպես նման դեպքում կասեին՝ փառատոնի վարագույրն իջավ:

Ցնտություն փառատոն, մինչ նոր հանդիպում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
14.07.2023 Թ.

ԼԻԱՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «ԻՆՃ ԴՈՒՐ Է ՉԱԼԻՍ ԿԱԿԱՆԻ ԽԱՄԱՅՆՔԱԿԵՄԻ ՄՈՒՏԵԳՈՒՄԸ ՄՉԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ»



Կապանի միջազգային երաժշտական փառատոնին մասնակցեց օպերային երգչուհի, մի քանի հեղինակավոր միջազգային մրցույթների դափնեկիր Լիանա Ալեքսանյանը: Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես գալուց զատ՝ նա նաև վարպետաց դասեր անցկացրեց սկսնակ երգիչ-երգչուհիների հետ: Հայտնի երգչուհուն խնդրեցինք պատասխանել մի քանի հարցի:

- Միջազգային հարթակում ճանաչված օպերային երգչուհի եք, հանդես եք ելել եվրոպական հեղինակավոր բեմահարթակներում, մասնավորապես, Միլանի լեգենդար «Լա Սկալայում», բարձր գնահատանքի էք արժանացել հանդիսատեսի և երաժշտական քննադատների կողմից, բայց տակավին ծանոթ չեք կապանցի հանդիսատեսին:

– Երաժշտական կրթությունս սկսել եմ ինը տարեկանում՝ Միրզոյանի անվան երաժշտական դպրոցում, 2005 թ. ավարտել եմ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Հայաստանի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Սերգեյ Դանիելյանի դասարանը: Սովորելու տարիներին հանդես եմ ելել Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ Վիոլետայի դերում, Ջուզեպպե Վերդիի «Տրավիատա» օպերայում, Անուշի դերում՝ Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայում:

– Ինչպե՞ս սկսվեց Ձեր եվրոպական բեմերը՝ որպես օպերային երգչուհի, որը Ձեզ միջազգային ճանաչում բերեց և բազում մրցանակներ:

– Անդրկովկասում լուսմեր էին անցկացվում Ավստրիայում անցկացվող մրցույթի համար, որի արդյունքներով ընտրեցին ինձ: Այդպես է եղել Հայաստանից իմ դուրս գալը: Դա 2004 թվականին էր: Մրցույթը Վիեննայում էր, որից հետո ինձ առաջարկներ եղան Նորվեգիայից և Ֆրանսիայից: Հետո վերադարձա Հայաստան, որովհետև Գեղամ Գրիգորյանը շատ էր ուզում, որ Անուշի դերերը կատարեմ, որ ինձ համար շատ մեծ նշանակություն ունեցավ: Հետո արդեն հյուրախաղերով մեկնեցի Նորվեգիա և Ֆրանսիա, այնուհետև



դերերգերով հանդես եկա Գերմանիայում, որը դարձավ իմ հիմնական աշխատավայրը: Բայց դա չհանգարեց, որ հանդես գամ և՛ Բուենոս Այրեսում, և՛ Իսպանիայում, Իտալիայում, անգամ հասել եմ ասիական երկրներ՝ Չինաստան, Հարավային Կորեա:

Տարեկան երկու-երեք անգամ լինում եմ Հայաստանում, 2018 թ. Եղուարդ Թոփչյանի և Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի հրավերով մասնակցել եմ Ջ. Պուչչինիի «Մադամ Բատերֆլայ» օպերայի բեմադրությանը և ներկայացրել գլխավոր հերոսուհու կերպարը: Շատ մեծ բավականություն եմ ստանում աշխատելով հայրենակիցներիս հետ: Զանգի էթե մեկ անգամ հայ ես ծնվել, այլ ազգի հոգեկերտվածք չես ունենա:

– Ինչպե՞ս ստացվեց, որ Ձեր այս տարվա այցը զուգահեռապես Կապանի երաժշտական փառատոնի անցկացման հետ: Հայտնի է, որ Դուք արտերկրում եք ապրում և ստեղծագործում:

– Ճշմարտությունն այն է, որ իրականում չէի պլանավորել այժմ Հայաստան գալ: Հայրենիք այցելում եմ հոկտեմբերին, երբ եղանակն

Մենք Հայաստանում էլ ունենք երաժիշտներ՝ Լիպարիտ Ավետիսյան, Գևորգ Հակոբյան, Ֆանտաստիկ տենոր Հովհաննես Այվազյան, որոնց առջև աշխարհի դռները բացվում են, նրանց համար այստեղ փոքրիշատե նորմալ պայմաններ պիտի ստեղծվեն:

ավելի մեղմ է լինում և մրգերը հասունացած: Քանի որ Սևակն իմ սիրելի ընկերներից է, ներկայացրեց փառատոնի ծրագիրը, ես էլ մտածեցի, որ մի փոքր լուսն պետք է ունենամ այն իրականացնելու համար: Մի անգամ Սևակը պարզապես ասաց. «Այսպիսի բան եմ ձեռնարկում, կարո՞ղ է՝ ցանկություն լինի մասնակցելու, պատասխանը չէր կարող բացասական լինել»:

– Որքան տեղյակ եք, փառատոնի շրջանակում վարպետաց դասեր են անցկացվել: Դուք ևս դրանից անմասն չէիք:

– Երեխաների հետ աշխատելը մի առանձնահատուկ հաճույք է, շատ հաճելի է տեսնել այն մոտիվացիան, այն ցանկությունը, այն կրակը, որ կան նրանց մեջ: Մարդը բնությունից օժտված է շատ լավ տվյալներով, բայց սխալ երգեցողության պատճառով կարող է վնասել ծայրալարերը:

Ամեն դեպքում շատ դժվարին մասնագիտություն է օպերային երգեցողությունը, որովհետև ի տարբերություն մյուս երաժիշտների՝ մենք մեր «գործիքը» կրում ենք մեր մեջ: Այսինքն՝ ամեն հուզում, ամեն անբնականություն, ընտանեկան խնդիրներ բացասաբար են ազդում հոգեվիճակի վրա, ինչն առաջնային է օպերային երգչուհու համար: Ամեն դեպքում դուրսի մասնագիտություն չէ երգեցողությունը...

– Ինչպես տեսնում եք, Ձեր առաջին տպավորությունները նպաստավոր են մեր երեխաների առումով:

– Նպաստավոր չեն, հոյակապ են: Կցանկանայի, որ այնքան ներդրումներ, որ անում են սպորտի բնագավառում, լինի նաև մշակույթի ոլորտում: Հպարտանում եմ, որ մեր մարզիկները մեղալը մեղալի հետևից են նվաճում: Եկե՛ք՝ մի քիչ էլ ուշադրություն դարձնենք մեր օպերային թատրոնին: Շատ երկրներում եմ եղել, օպերային թատրոնը պետությունը վերցնում է իր հովանավորության ներքո: Ամեն օպերային թատրոն ունի իր հովանավորը, մենք չունենք: Եթե ունենք էլ, այդ հովանավորությունը շատ քիչ է: Ինչո՞ւ ես պիտի օտար պիտերում երգեմ: Եթե այնտեղի վաստակածի կեսն այստեղ վաստակեմ, կմնամ իմ հայրենիքում: Հանրապետության արտիստների թիվը, չէք պատկերացնի, ինչքան մեծ է արտերկրում՝ Գերմանիա, Ֆրանսիա, ամեն տեղ: Բալետի մեր մենագարդները հիմնականում դրսում են: Պատճառ կա, որ գնում են. մարդն իր ընտանիքը ո՞նց պահի: Եվ դեռ չեմ ասում, որ խաղացանկային քաղաքականությունը բացակայում է, պատշաճ վերաբերմունք չկա երգչի հանդեպ:

– Նորից դառնա՞նք փառատոնին: Այս դժվարին պայմաններում փառատոնն ընկալում եք որպես քաջալերանք այուներցիներին:

– Իրողությունն այն է, որ մեր ազգի մեջ տաղանդներն ավելի շատ են, քան հնարավորությունները, ինչո՞ւ մենք պիտի ունենանք մեկ օպերային թատրոն: Ունենք մարզահամերգային համալիր, որտեղ «փոփ» երաժշտություն է հնչում, բայց դասական երաժշտություն չի հնչում, մնացել ենք ինչ ժամանակներում, բայց դասական երաժշտական արվեստը հաստատուն քայլերով առաջ է գնում: Մենք Հայաստանում էլ ունենք երաժիշտներ՝ Լիպարիտ Ավետիսյան, Գևորգ Հակոբյան, Ֆանտաստիկ տենոր Հովհաննես Այվազյան, որոնց առջև աշխարհի դռները բացվում են, նրանց համար այստեղ փոքրիշատե նորմալ պայմաններ պիտի ստեղծվեն:

– Հետաքրքիր է, որ Ձեր դատողությունները, մտահոգությունները համահայկական հնչողություն ունեն, իսկ Սյունիքում, այսինքն՝ սահմանամերձ բնակավայրերում՝ Մեղրիում, Գորիսում, Կապանում արվեստի զարգացումն ինչպե՞ս էք պատկերացնում:

– Օրինակ, ինձ դուր է գալիս Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի մոտեցումը մշակութային քաղաքականությանը: Նման մարդիկ անհրաժեշտ են: Մարդը ցանկանում է մի լավ բան անել, ինչը ստացվում է: Ուղղակի լավ կլինի, որ նման բաները (խոսքը փառատոնի մասին է, խմբ.) հաճախակի լինեն: Իսկ հանրապետության երաժիշտներս պատրաստ ենք մասնակցել: Մի շաբաթ չկա վիրահատվել եմ, բայց ինձ համար անչափ կարևոր էր այստեղ գտնվելը: Եվ մենակ ես չեմ նման ձևով մտածում, այլ բոլոր այստեղ գտնվողները: Առաջին անգամ եմ Սյունիքում և զղջում եմ, որ ինչու շատ ավելի վաղ չեմ եղել այստեղ:

Եթե Գևորգ Փարսյանը՝ որպես համայնքապետ, այսքան բան է անում, հապա մշակույթի նախարարությունն ինչքան բան կարող է անել:

– Էլ ի՞նչ կուզեիք ավելացնել մեր գրույցին՝ որպես ավարտ:

– Ուզում եմ ավելացնել, որ պիտի ապավինենք հայկական երաժշտությանը, ոչ թե «ռաբիզին», որը հայկականության հետ որևէ աղերս չունի: Դա արմատախիլ պիտի արվի և շարունակ անհայտ ուղղությամբ, որովհետև փչացնում է իսկական արվեստը: Պիտի կենտրոնանալ ժողովրդական, դասական, ջազային երաժշտության վրա, և ամեն ինչ բնականոն հունով կըլթալա:

ՏԻԳՐԱՆ ՍՈՒՉՅԱՆ. «Հայկական երաժշտությունը շատ հաջող ներդաշնակվում է ջազային երաժշտությանը»

Կապանի միջազգային երաժշտական փառատոնի օրերին գրույցներ ունեցանք մայրաքաղաքից ժամանած երաժիշտ կատարողների հետ, ցանկացանք նրանց կարծիքն իմանալ փառատոնի մասին: Ստորև ներկայացնում ենք գրույցը ջազմեն, շեփորահար Տիգրան Սուչյանի հետ:

- Յարգելի Տիգրան, որպես մեր գրույցի նախաբան, կուզեի՞նք, որ ներկայանայիք ընթերցողին:

- Ծնվել եմ 1981 թվականին Երևանում: 1987 թվականից սովորել եմ երաժշտական դպրոցի երգեցողության, ապա շեփորի դասարանում, նվագել եմ «Արաբկիր», այնուհետև՝ «Արարատ» փողային նվագախմբերում: 1998 թվականին ընդունվել եմ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, նույն թվականից նվագում եմ Հայաստանի պետական ջազային նվագախմբում: 1999 թվականից զուգահեռ նվագել եմ նաև «Armenian Navy Band», 2004 թ.-ից՝ «Կատուններ», 2008 թ.-ից՝ «Նուզ» խմբերում: Համագործակցում եմ հայկական տարբեր երաժշտական խմբերի և երաժիշտների հետ: Արտերկրում Բելգիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում մասնակցել եմ միջազգային երաժշտական փառատոնների, «Կատուններ» խմբի հետ մասնակցել եմ Մոսկվայի «Ուսարդա» ջազային փառատոնին, Կաննում՝ «Միդեմ» փառատոնին: 2008 թ.-ից նվագում եմ նաև «Ռեին-կարնացիա» խմբում, որի հետ մասնակցել եմ Բաթումի ջազային խմբում, Սերբիայի Կուստենդոլոֆ քաղաքում կայացած կինո և երաժշտական փառատոններին:

- Ինչպե՞ս հայտնվեցիք այս ծրագրում:

- Սևակ Ավանեսյանի հետ մտերիմ ընկերներ ենք և տարբեր առիթներով ու ժամանակներում զանազան ծրագրերում համագործակցել ենք: Մասնավորապես անցած ամառը Ստեփանակերտում կազմակերպեցինք «Չարթունք» փառատոնը, որից հետո զաղափար հղացավ՝ Կապանում ևս անցկացնել փառատոն՝ Սևակի գլխավորությամբ: Բավականին շփվելուց, խորհրդակցելուց հետո այդ ամենն իրականություն դարձավ:

Ասեմ նաև, որ Արցախում կրթամշակութային արշավներ ենք կազմակերպել, եղել տարբեր քաղաքներում ու գյուղերում: Ձգտում էինք, որ ավելի շատ երիտասարդներ ընդգրկվեն այդ ամենի մեջ:

Պետք է նշեմ նաև՝ Արցախի պետական ջազային խմբի ղեկավարն եմ:

- Ձեր կազմակերպած փառատոնով ի՞նչ եք ուզում Սյունիքին հաղորդել, ներշնչել...

- Իմիջայրոց՝ առաջին անգամ եմ Կապանում, ավելի ստույգ՝ մայիսին եկանք, «հետախուզման» նպատակով՝ Սևակ Ավանեսյանի հետ, կազմակերպական հարցեր լուծելու համար: Շատ սիրեցի Կապանը, այստեղ ինձ լավ եմ զգում, մարդիկ բարյացակամ են, երեխաները՝ հրաշալի: Այս փառատոնն անհրաժեշտ էր կապանցիներին: Շատերը Հայաստան ասելիս մայրաքաղաք Երևանն են հասկանում, ամեն ինչ կենտրոնացել է Երևանում, մարզերը հանրապետության համար չեն մնացել: Ուրիշ բնագավառ նկատի չունենեմ, երաժշտության ոլորտը եռում է, արդեն պիտի դուրս գար, ուղղվեր դեպի սահմանամերձ բնակավայրեր, որովհետև մայրաքաղաքից դուրս հաստատապես կան շնորհալի երիտասարդներ, ընդամենն անհրաժեշտ է նրանց աջակցել, ոգևորել, պայմաններ ստեղծել, որ շփվեն մայրաքաղաքի իրենց հասակակիցների հետ, համոզվեն, որ բարձր արվեստն իրենց հասնում է: Երբ արդեն շատ արագ կարող են հասնել: Նույնն արել ենք Ստեփանակերտում այլ բան է ստացվել,



– Հայաստանում առաջին ջազային կոլեկտիվը 1938 թվականին կազմավորված Հայաստանի էստրադային նվագախումբն էր (Հայաստանի պետական ջազային նվագախումբը)՝ կոմպոզիտոր և թավջութակահար Արտեմի Այվազյանի գլխավորությամբ: 1970-ականներից սկսած՝ Հայաստանի ջազային նվագախումբը մեծ ճանաչման արժանացավ Խորհրդային Միությունում:



այստեղ՝ մի այլ բան: Խոսքը փառատոնի կազմակերպման մասին է: Երիտասարդներին պիտի ոգեշնչել, «կայծ» տալ, որ նրանք չսեն՝ երաժշտությամբ չեն կարող տուն պահել:

– Կուզե՞նայինք իմանալ՝ ե՞րբ են մեզանում սկզբնավորվել ջազային արվեստը, ջազային երաժշտությունը, ի՞նչ նշանավոր դեմքեր ունենք ջազային արվեստում:

- Հայաստանում առաջին ջազային կոլեկտիվը 1938 թվականին կազմավորված Հայաստանի էստրադային նվագախումբն էր (Հայաստանի պետական ջազային նվագախումբը)՝ կոմպոզիտոր և թավջութակահար Արտեմի Այվազյանի գլխավորությամբ: 1970-ականներից սկսած՝ Հայաստանի ջազային նվագախումբը մեծ ճանաչման արժանացավ Խորհրդային Միությունում: Հայաստանի պետական էստրադային նվագախումբը, Կոնստանտին Օրբելյանի գլխավորությամբ, առաջինն էր ԽՍՀՄ ջազային նվագախմբերից, որ մեկնեց ԱՄՆ: 1990-ական թվականների սկզբներին, ԽՍՀՄ փլուզման և Ղարաբաղյան պատերազմի ու ծանր տնտեսական ճգնաժամի պատճառով, Կոնստանտին Օրբելյանը չկարողացավ այլևս շարունակել աշխատանքն իր նվագախմբի հետ և մեկնեց Սան Ֆրանցիսկո: 1997 թվականին երիտասարդ երաժիշտներով վերականգնված «Հայաստանի պետական ջազ-նվագախումբ»-ը



վերսկսեց իր աշխատանքը՝ կոմպոզիտոր ու դաշնակահար Արմեն Մարտիրոսյանի գլխավորությամբ:

Երգացանկս ձևավորվել է կրթությունս ստացել եմ Կոնստանտին Օրբելյանի ստեղծագործությունների ազդեցությամբ: 1997 թվականին ընդունվեցի Հայաստանի պետական ջազ խումբ, որը ղեկավարում էր, ինչպես նաև, Արմեն Մարտիրոսյանը:

– Կոնստանտին Օրբելյանը մեր հայրենակիցն է, արմատներով Գորիսի Տաթև գյուղից, ջազի ոլորտում ևս մի հայրենակից ունե՞ինք՝ Ակսել Բակունց կրտսերը...

- Այո, Ակսել Բակունցը, ցավոք, երջանկահիշատակ: Նա ջազ բոլեջի տնօրենն է եղել, ավելի վաղ «Սերպանտին» վոկալ-գործիքային անսամբլի ղեկավարն էր:

Կոնստանտին Օրբելյանն իրապես մանետոր էր, անձամբ եմ զգացել նրա շունչը, նրա ազդեցությունն իմ որպես երաժշտի ձևավորման և կայացման գործում: Երբ նա կանգնեց նվագախմբի առջև, առաջին անգամ զգացի, թե ինչ է լիդերը:

– Ինչպե՞ս նշեցիք, Արցախի ջազային խումբն եք ղեկավարում, հիմա շրջա-

փական մեջ է հայոց հիմնավորը երկրամասը, հաջողվո՞ւմ է կապ պահպանել կոլեկտիվի հետ:

- Իմ ղեկավարի կարգավիճակը նույնն է մնացել, փորձում եմ այստեղից հեռավար ղեկավարել խումբը, ձայնագրություններ ենք անում, շուտով այդ նախագծերը կլուսաբանվեն: Ահա այդպես՝ կրթամշակութային ծրագրերով կապվեցի Արցախի հետ: Ուրախալի է, որ արցախցիներն ամուր են կառչած իրենց հողին: Թեպետ անմարդկային դժվարություններին՝ չեն պատրաստվում լքել իրենց հայրենիքը:

– Ազգային և համամարդկային արժեքների մրցակցության պայմաններում կարողանո՞ւմ եք Ձեր ասելիքով, խաղացանկով մեր ազգային պահպանել, հայկական երաժշտության ավանդույթները շարունակել:

- Նայած երաժիշտն ի՞նչ է ուզում: Հրապարակի վրա են ազգային և օտարերկրյա ժառանգությունները: Դու ես որոշում որ կողմը գնալ: Ես նախընտրում եմ այդ երկուսը միավորել: Քանզի եթե մասնա ազգային շրջանակի մեջ, մենք «այֆոն» չենք ունենա, ժամանակակից մեթոդներ չենք վարի: Ասել է թե՛ մենք հարմարվում ենք աշխարհի թելադրած օրենքներին:

Բայց և ամենևին չի նշանակում, որ տրվելով ինչ-որ նորամուծությունների, արևմտյան աշխարհի բարբերին, մենք կորցնում ենք մեր ինքնությունը: Որովհետև մի լեզու կա, որ հասու է բոլորին: Դա երաժշտության լեզուն է: Ամեն երկրի երաժիշտ, կոմպոզիտոր իր երաժշտության, ստեղծագործության մեջ պիտի պահի ինքնությունը, որպեսզի ճանաչելի դառնա: Հայկական երաժշտությունը շատ հաջող ներդաշնակվում է ջազային երաժշտությանը, կարծես իրար համար ստեղծված լինեն: Թե՛ ռիթմի, թե՛ հարմոնիայի տեսակետից լավ համադրվում են:

– Դուք, ինչպե՞ս նաև փառատոնին մասնակից մյուս առաջնակարգ երաժիշտները, կապանցի երեխաների հետ (և ոչ միայն) վարպետաց դասեր եք անցկացրել. Կապանի երաժշտական, հանրակրթական դպրոցների աշակերտներն անհրաժեշտ ներուժ ունե՞ն, պատկերացում կազմո՞ւմ են երաժշտության այս կամ այն տեսակի մասին:

- Իհարկե: Այստեղի մասնագետների հետ նման խոսակցություն եղավ: Կարծիք ինչեց, թե կարդերն են քիչ: Ըստ իս՝ ոչ թե կարդերն են սակավ, թող ինձնից ոմանք չնեղանան, այլ մատուցում է սխալ, որովհետև փոքր-ինչ կարծրացած մտեցում կա դասավանդման մեթոդիկայի առումով: Ըճմարիտն ասած՝ ես էլ եմ խորհրդային դպրոցի քուրայով անցել, մինչև հիմա իմ միջից դա դուրս չի գալիս, ես էլ բարդությամբ ունեմ, կարծրատիպեղ, որ մարդկանց մեջ սերմանում են դպրոցից, չեն թողնում ազատ շնչել: Օրինակ եմ բերում. մի երեխա որոշել է Կոմիտասի ստեղծագործությունը գործիքավորել կամ մի այլ կերպ ինչեց-նեղ: Ինչո՞ւ մեծերը նրան արգելեն, թե դու իրավունք չունես Կոմիտասի ստեղծագործությանը ձեռք տալ: Դրա փոխարեն արդարացի կլիներ ճիշտ ուղղությունը ցույց տալ: Եթե դու երեխային կրթություն չես տալիս, ինքն անում է անճաշակ բան, եթե դու նրան ճիշտ ուղղություն ես ցույց տալիս, ինքն դա անում է ճաշակով. սա է տրամաբանությունը:

– Կապանում անցկացված միջազգային երաժշտական փառատոնի առևտրությամբ ի՞նչն եք ամենից շատ կարևորում:

- Կապանում ելույթ ունեցան միջազգային համարում ունեցող երաժիշտներ, տասը օր շարունակ ինչեց դասական երաժշտություն, ինչից գեղագիտական մեծ հաճույք ստացավ հանդիսատեսը: Բայց այս համատեքստում անչափ կարևորում եմ վարպետաց դասերը, որ անցկացրին բարձրակարգ երաժիշտ կատարողները: Փառատոնի եզրափակիչ համերգից առաջ ես էլ էի բեմահարթակում, երբ վարպետաց դասերի ժամանակ աչքի ընկած երեխաներին պարզվեցին էին համանվում, երևույթը շատ ոգևորիչ էր:

– Հույս կա՞, որ այս փառատոնը շարունակական կլինի:

- Իհարկե, բայց փառատոնը յուրաքանչյուր անգամ նորովի պիտի ներկայանա: Եվ ամեն տարի նոր երիտասարդներ պիտի ներգրավվեն ծրագրում, նրանց ճանապարհի պիտի տալ, լինել նրանց կողքին, ոգևորել, որ գնան ճիշտ ուղիով և սխալներ թույլ տան:

ԶՐՈՒՅՑԸ՝ ԿԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ



ՄԵՐ ՀՅՈՒՐՆ ԵՐ ՆՈՐԱՅՐ ՔԱՐՏԱՇՅԱՆԸ, ՈՒՄ գլխավորած «Մենուա» խումբը մասնակցում է կապանյան փառատոնին

Հուլիսի 4-ից 14-ն անցկացվող Կապանի միջազգային երաժշտական փառատոնն ընդմիջտ կմնա Սյունիքի մարզի և մասնավորապես Կապանի հոգևոր-մշակութային պատմության մեջ: Փառատոնի ընթացքի մասին ամենօրյա հրապարակումներից զատ՝ «Սյունյաց երկիրը» հանդիպումներ եր ունենում փառատոնին մասնակցող երաժշտական խմբերի ղեկավարների, ճանաչված երաժիշտների հետ: Հերթական հանդիպումը ժողգործիչների «Մենուա» խմբի ղեկավար Լորայր Քարտաշյանի հետ էր:

Պարոն Քարտաշյան, մեր ընթերցողը նախևառաջ կուզենա ծանոթանալ Ձեզ հետ, խնդրեմ:

– Ծնվել եմ 1967 թ. օգոստոսի 25-ին Տավուշի շրջանի Այգեծոր գյուղում, տոհմիկ որմնադիրների ընտանիքում: 1977-1982 թթ. սովորել եմ Դիլիջանի Անդրեյ Բաբանի անվան երաժշտական դպրոցի կարճատև դասարանում: 1982-1986 թթ. սովորել եմ Երևանի Առևտրա-Քառաստանի անվան երաժշտական ուսումնարանի դուդուկի բաժնում: Ուսմանը զուգընթաց ուսումնասիրել եմ հայկական ժողովրդագրությունը, մասնավորապես՝ հովվական բլուզը (սրինգ)՝ զարգացնելով և նոր շունչ հաղորդելով մոռացված գործիքին: Տիրապետում եմ հայկական ժողովրդական գործիքներին (բլուզ, դուդուկ, զուռնա, շվի, պլու, պարկապուկ): 1990 թ. սկսած համագործակցում եմ տարբեր խմբերի և արտիստների հետ: Թողարկել եմ երեք ձայնասկավառակ՝ «Հին պատմություններ» (2005 թ.), «Ծառաստան» (2010 թ.), «Լորայր Քարտաշյան և «Վան Նախագիծ» (2012 թ.): Մի բանի տասնյակ ստեղծագործություններ հեղինակ եմ: 1988 թվականից դասավանդել եմ երաժշտական դպրոցներում՝ փոխանցելով գիտելիքներս երիտասարդներին: 2010 թ. հիմնադրել եմ «Վան Project» նվագախումբը և «Մենուա» խումբը: «Վան Project» խմբով կատարել եմ բանահավաք գործունեություն Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում՝ հավաքելով հայկական երաժշտություն: Վերա-

կանգնել եմ հայկական երկփող պարկապուկը, որը ներդրել է «Մենուա» խմբում: Հիմնական նպատակս է կորսված հայկական երաժշտության վերականգնումը և փոխանցումը երիտասարդ սերնդին:

– Իսկ հիմա ծանոթանալ ժողգործիչների «Մենուա» խմբին:

– «Մենուա» խումբը հիմնադրվել է 2010 թ.: Այն նպատակ ունի ներկայացնել հայկական գործիքային երաժշտության ավանդույթները՝ պրոֆեսիոնալ մեկնաբանությամբ: Իր նվագացանկում ներառել է հայկական ֆոլկլորային ստեղծագործություններ, նաև ստեղծագործություններ: Խումբը ներկայացնում է հայկական փողային նվագարանների հինգ ընտանիքը՝ դուդուկ, բլուզ, շվի, պարկապուկ և զուռնա: Խմբի նպատակն է՝ լինել օրինակ երիտասարդ երաժիշտների համար, ովքեր ապագայում պիտի ներկայացնեն ազգային հարուստ երաժշտական ժառանգությունը:

Խմբում վեց հոգի ենք, օգտագործում ենք փողային գործիքներ, թավջութակ, հարվածային գործիք: Երգիչներ չունենք, սա զուտ գործիքային պրոֆեսիոնալ խումբ է:

– Ինչպե՞ս ընդգրկվեցիք Կապանի միջազգային երաժշտական փառատոնի ծրագրում:

– Ընկերներս դիմեցին, և ես առանց երկմտելու համաձայնվեցի, որովհետև սա առաջին փառատոնը չէ, նաև Արցախում ենք նման փառատոն կազմակերպել: Ինձ շահագրգռում է հանգամանքը, որ դրանով ծառայում եմ երկրիս, մեր երեխաներին: Ու նման փառատոնների բազմիցս եմ մասնակցել, որոնց թվարկումը պատշաճ չեմ համարում:

Մի խոսքով՝ շատ եմ արել ու դեռ պետք է անեմ: Մտածում եմ Բարձրալը մեզ տվել է այդ շնորհն ու մենք էլ պարտավոր ենք այն փոխանցել երեխաներին, ծառայեցնել մարդկանց: Դա ամենակարևոր գաղափարն է, որով առաջնորդվում եմ: Այս փառատոնին մասնակցելու մոտիվն էլ դա է:

– Մեզ հետաքրքրեցին դուդուկի հետ կապված Ձեր որոնումները և, այսպես ասած, նորամուծությունները: Ի դեպ, վերջին տարիներին շատ ենք լսում դուդուկի հետ կապված բանավեճերի մա-

սին՝ հարևան ազգերի հետ:

– Մենք կարող ենք բանավիճել բոլորի հետ և անընդհատ՝ ո՛վ է ստեղծել այդ գործիքը և այլն: Նրանք ասում են՝ հայերն են վերցրել մեզանից: Իմ կարծիքով ոչ միայն պետք չէ մտնել այդ բանավեճերի մեջ, այլև ուշադրություն չդարձնել ընդհանրապես: Պարզապես պետք է լավ նվագել այդ գործիքով: Մեր ազգը շատ լավ է նվագում դուդուկ գործիքի վրա, մեր կատարողական մակարդակը շատ անգամ բարձր է հարևան ազգերի ներկայացուցիչների կատարողական մակարդակից: Եվ այն տեղ չի թողնում վիճելու Նույնիսկ դուդուկի ծագումնաբանության շուրջ:

– Հայազգի դուդուկահարների մասին խոսելիս առաջին հերթին և ավամա հիշում ենք Վաչե Հովսեփյանի, Ջիվան Գասպարյանի բարձր անունները...

– Կարծում եմ երաժշտության մեջ չի կարելի կատեգորիկ գնահատականներ տալ, որովհետև յուրաքանչյուր կատարող, յուրաքանչյուր վարպետ իր հոգեկան աշխարհն ունի: Իսկ հայ ժողովուրդին այդ ոլորտում լավ վարպետներ ունեցել է: Հին դուդուկահարներից կարող եմ նշել Մարգար Մարգարյանին, Լևոն Մադոյանին... Իրենք կատարելագործել և բարձրացրել են այդ արվեստը, ինչն էլ նպաստել է, որ մյուսներն իրենց լսելով առաջ գնան:

Այդ, Վաչե Հովսեփյան, Ջիվան Գասպարյան, Գեորգի Միևասով... Այս վարպետներից յուրաքանչյուրը շատ մեծ գործ է կատարել տվյալ ոլորտում, բայց ոճային տարբերություններ ունեն՝ երաժշտական իմաստով: Եվ յուրաքանչյուրն իր գեղեցիկ նկարագրով մտել է հայկական երաժշտության պատմության մեջ: Բոլորը փայլում են իրենց յուրովի գույներով...

– Կարո՞ղ ենք փաստել, որ գեղեցիկ այդ ավանդույթները շարունակվում են նորոյա դուդուկահարներով:

– Այո, այդպես է: Ունենք բավականին լավ երիտասարդներ, որոնց կատարողական մակարդակն ասվածի վկայությունն է: Ես, օրինակ, երբ սկսել եմ նվագել, դասեր եմ առել 20 և ավելի վարպետից: Այսօրվա սկսնակն ավելի շատ վարպետների է ունկնդ-

րում, ավելի շատ տեղեկացված է: Ունենք շատ լավ վարպետներ, ամեն մեկն՝ իր ոճով: Այսինքն՝ երեխան ունկնդրելով՝ ընտրություն անելու, կողմնորոշվելու լայն հնարավորություններ ունի:

– Ձեր խմբի նվագացանկի մասին, ի՞նչ սկզբունքով եք ձևավորում, ազգային-համամարդկային արժեքների հանդեպ Ձեր վերաբերմունքը:

– Ազգայինը դա մեր արմատն է՝ առանց որի չես կարող ոչինչ անել: Բայց այսօրվա իրողությունները չեն կարող անդադարներ չունենալ մեր մտածելակերպի վրա: Դրա համար էլ դուդուկներ ստեղծեցի, որպեսզի դրանք բազմաձայն հնչեն, ինչի շնորհիվ մեր երաժշտությունը հնչեղության նոր տարրեր է պարունակում: Արդյունքում՝ այսօր միայն ավանդական երաժշտություն չենք նվագում, այլ նաև պրոֆեսիոնալ ժամանակակից երաժշտություն: Նպատակն այս է՝ նոր շունչ, նոր մտեցում, նոր միտք մատուցել եկող սերունդներին:

Ժողովրդական գործիքներ-ոչ ժողովրդական. դրանց ավանդական սահմաններն էլ, կարծեք, ջնջված են, որովհետև նվագում ենք գործեր, որոնք ժամանակակից են երաժշտական հնչեղությամբ, իսկ եթե դատենք ավանդական չափանիշներով, ապա ժողովրդական չեն:

– Ձեր պատասխաններից վերստին եզրակացնում ենք՝ երաժշտությունը զարգացող «օրգանիզմ» է, ինչը Ձեզ մղում է ժամանակակից շունչ տալ երաժշտությանը:

– Եթե անդադառնալք երկու հարյուր և ավելի տարիներ առաջ գոյություն ունեցած միջավայրին, ապա Արևելյան Հայաստանն ամբողջապես մոտում էր Պարսկաստանի կազմի մեջ, նաև մշակութային տեսակետից: Եվ, բնականաբար, դա ազդեցություն է ունեցել մեր երաժշտական արվեստի վրա: Հետո միացանք ռուսական կայսրությանը, որի մշակութային ազդեցությունը նույնպես կար ու կա: Այդ ազդեցություններն արտացոլեցին երաժշտական ամենատարբեր ոլորտներում ու տարբեր ձևերով: Այսինքն՝ ժամանակը և միջավայրը չեն կարող ազդեցություն չունենալ երաժշտական արվեստի վրա:

Օրինակ, մեր «ռաբիս»-ը պարսկական երաժշտության ինտերպրետացիա է...

Կոմիտասը գնաց և բանահավաքություն արեց, մեր երգարվեստի ընդերքից պեղումներ արեց ու ֆիքսեց նոտաներով, որի շնորհիվ մեծ քանակությամբ երգեր փրկվեցին կորստից...

Այսօրվա իրողություններն էլ իրենց ազդեցությունն ունեն...

– Ժամանակակից երաժշտություն, տեխնիկական նոր հնարավորություններ, բայց արդո՞ք նոր ստեղծվող երաժշտական գործերը տեղավորվում են մեր դավանած արժեքային համակարգում:

– Հարցիդ հարցով պատասխանեմ. ինչո՞ւ Ռուսաստանից երբ երգիչ է գալիս ու դահլիճները լցվում են, իսկ Ռուբեն Հախվերդյանի համերգը, օրինակ, չի կարող նման հետաքրքրության արժանանալ, և դա այն դեպքում, երբ Ռուբեն Հախվերդյանի արվեստն արժեք է: Նույն վերաբերմունքը կարող եք տեսնել նաև մյուս կատարողների համերգների դեպքում: Հիմա՝ որքանով է այդ իրողությունը համապատասխանում մեր արժեքային համակարգին: Այո, նորի մեջ ամեն ինչ չէ, որ կարող է արժեք լինել մեզ համար, բայց, հավաստեցեք, մնայուն արժեքներ նույնպես ստեղծվում են. դրանք դասականի տիրույթում են, ազգային արվեստի դաշտում են...

Կան, իհարկե, «սեզոնային» երգեր. կկատարվեն վեց ամիս, երկու տարի... և դուրս կմղվեն մարդկանց հիշողությունից:

– Իրական արվեստը և շուր-բիզնեսը, կարծեք, մրցույթի մեջ են: Կարողանո՞ւմ եք գործիքային խմբով այդ մրցույթին դիմանալ:

– Մենք նվագում ենք սպեցիֆիկ երաժշտություն, որը, բնականաբար, հաշվարկված չէ մեծ լսարանի համար. ովքեր հասկանում են՝ շատ լավ, ովքեր չեն հասկանում՝ կաճեն և ժամանակի ընթացքում կհասկանան:

Շուր-բիզնեսի ոլորտում մենք մրցակցելու ինչիդ չունենք...

Նորից ասեմ՝ սպեցիֆիկ երաժշտությունը հաշվարկված չէ մեծ լսարանի համար, բայց այս դեպքում թո ազգային մշակույթը պահելու ինչիդ է առաջանում, այնպես «մետրոպոլիտան» արվեստը կշարունակի դոմինանտ

ԼԻԼԻԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Կապանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի տնօրեն

3 ուլիսի 4-14-ը Կապանում անցկացվեց մեծ փառատուն՝ մասնակցությամբ շատ հայտնի երաժիշտների՝ աշխարհի տարբեր ծագերից: Այդ երաժիշտների կողմից անց են կացվել վարպետաց դասեր, որոնք շատ օգտակար էին և՛ մեր դասատուների, և՛ աշակերտների համար: Վարպետաց դասերը կազմակերպվել են հիմնականում թիվ 1 երաժշտական դպրոցի և Կապանի արվեստի պետական բոլեջի դահլիճում: Մասնակցել են Կապանի բոլոր երաժշտական դպրոցների և արվեստի մանկական դպրոցի աշակերտներն ու դասատուները: Մեծ բավականություն ենք ստա-



ցել նրանց կատարած աշխատանքից, օգնել են և՛ նոտա-ներով, և՛ խորհուրդներով, և՛ կատարումներով: Կարևոր էր հանգամանքը, որ տարբեր դպրոցի երեխաներ լսում էին միմյանց կատարումները, նրանց տված խորհուրդները, դիտողությունները: Սա մեծ շանս էր մեզ համար՝ սովորելու, ինտեգրվելու այդ պրոցեսներին, և հուսով եմ դա շարունակական կլինի, բանի որ Կապանի համայնքապետն էլ շահագրգռված է, որ այսպիսի միջոցառումները հաճախակի լինեն, որպեսզի Կապանը՝ որպես մարզկենտրոն, ավելի ակտիվ մշակութային կյանքով ապրի:

Ուզում եմ նշել մի բանի առաջնակարգ երաժիշտների անուններ, ովքեր վարպետաց դասեր էին անցկացնում՝ դաշնակահարուհիներ՝ Աննա Սարկիսովա, Մարիաննա Շիրիլյան, Զրաչյա Ավանեսյան՝ ջութակ, Սևակ Ավանեսյան՝ թավջութակ, Սամվել Ավանեսյան՝ ֆլեյտա, Դավիթ Եժով-Յավրույան՝ թավջութակ, Արմեն Քարամյան՝ դաշնամուր...

Շատ գոհ եմք, բարձր ենք գնահատում այդ ամենը, իրենք էլ մեր երեխաներից են գոհ, ովքեր ընկալում են, բայց պետք է ճիշտ աշխատեն:

Վերջում էլ լավագույններն արժանացան պարգևների:

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Կապանի արվեստի պետական բոլեջի տնօրեն

2 023 թ. հուլիսի 4-14-ը Կապանում կայացավ միջազգային երաժշտական փառատուն, որը երևույթ էր ոչ միայն Կապանի, այլև Այոնիքի մարզի ու հանրապետության կյանքում, որովհետև տասը օրվա ընթացքում հանդես եկան բազմաթիվ աշխարհահռչակ երաժիշտ կատարողներ:

Փառատունը բավականին լուրջ արձագանք ունեցավ և՛ հանդիսատեսի, և՛ երաժշտասեր հասարակության շրջանում: Փառատունն իր մասշտաբներով եզակի էր Կապանում. նման մասշտաբի համերգներ, համերգաշարեր տարիների ընթացքում չէին եղել:

Կապանի արվեստի քաղաք է, և չի կարելի ասել, թե Նախորդող ժամանակաշրջանում ոչինչ չի եղել Կապանում այդ առումով. կազմակերպվել են առանձին համերգներ՝ երկօրյա, եռօրյա, բայց նման տարողունակ փառատուն-համերգաշար չի եղել:

Շատերիս համար կարևոր էր, որ կազմակերպիչը մեր համերգից Սևակ Ավանեսյանն էր՝ թավջութակահար, ում ներդրումը շատ մեծ էր: Նախաձեռնությունը, զաղափարը Նույնպես նրան էին: Տասը օր շարունակ համախմբել նման կարգի երաժիշտ-

ների՝ լուրջ ծրագրերով, շատ բարդ էր ու հեշտ չէր իրական-

ՍԵՎԱԿ ԱՎԱՆԵՍՅԱՆ. «Կապանի երաժշտական փառատունը լինելու է ավանդական...»

Սկիզբը՝ էջ 2

– Փառատունի վերջին օրը՝ հուլիսի 14-ին, Ձեր խոսքում այսպիսի արտահայտություն հնչեց՝ սա Կապանի երաժշտական առաջին փառատունն է. կարելի՞ է ենթադրել, որ երբևէ տեղի կունենա երկրորդ փառատունը, այսինքն՝ կդառնա ավանդական:

– Ըստ ամենայնի՝ փառատունը կդառնա ավանդական: Ընդհատ է, պարոն Պարույանից վերջնականապես չեմ ճշտել, բայց երբ փակվան արարողության ժամանակ ասում էի, որ կլինի երկրորդ, երրորդ փառատունը, տեսա ժպտում է, դա ինչ-որ բան ասում էր: Իմ կողմից ավելացնում եմ՝ փառատունը լինելու է ավանդական, ամեն անգամ՝ ավելի ներկայացուցչական կազմով: Մենք հավակնոտ ծրագրեր ունենք, այս մեկը Ձեր տեսած ամենափոքր փառատունն է Կապանում, գնալով առաջընթաց ենք ունենալու՝ ավելի մասշտաբային փառատուններ ենք ունենալու: Զինգ տարուց հետո Կապանը դառնալու է համաշխարհային մշակույթի կենտրոններից մեկը, ինչպիսիք են Չայբեյքը, Վերբիերը: Իսկ տասը տարուց հետո կապանցի փոքրիկները ելույթ են ունենալու ավելի հեղինակավոր բեմերում: Զուտով եմ՝ այստեղի երեխաները միջազգային մրցույթների մրցանակակիրներ կդառնան: Ուզում եմ ասել՝ մենք ճիշտ ուղու վրա ենք: Զունվարին, երբ ասում էինք, թե ինչ ենք ուզում անել, ոչ մեկը չէր հավատում, երաժիշտները պատկերացնում էին, բայց թերահավատորեն էին վերաբերվում ասածներին:

– Կապանյան հանրությունը հիացած է փառատունով, տասը օր շարունակ երաժշտության կախարհական մեղեդիների աշխարհում էին, բայց Ձեր գնահատականը կուզենայինք լսել: Գնաք բարձր է իմանալ, արդյո՞ք Ձեր բոլոր ծրագրերը կանխկազմված են, թե՛ ընթացքում եղան ծրագրային փոփոխություններ:

– Ծրագրային շատ փոքրիկ փոփոխություններ եղան: Շատ սիրելի ջութակահար Արմեն Նիկողոսյանը չկարողացավ գալ՝ հարգելի պատճառով, նրա փոխարեն եկավ Կարմեն Թոսուկյանը, ով Զայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի առաջին կոնցերտմայստերն է, այսինքն՝ մի հիասքանչ ջութակահարին փոխարինեցինք մի այլ բարձրակարգ ջութակահարով, ով գերեզկացրեց և հարստացրեց մեր փառատունը: Անակնկալներ եղան այս կարգի: Դմիտրի Մասլենկո, ով բավականին անուն հանած երաժիշտ է Ռուսաստանի Դաշնությունում, իմանալով փառատունի մասին, իր միջոցներով եկավ և մասնակցեց: Մասլենկո անսահման վարպետաց դասեր անցկացրեց մեր երեխաների հետ: Անակնկալներ եղան, բայց դրական... Երևանից մանուկներ եկան, ով-



քեր պարզապես լսել էին փառատունի մասին: Զեղինակավոր եվրոպացի երաժիշտներ կան, որոնց ուղարկեցի փառատունից լուսանկարներ, տպավորված էին, խոստացան մյուս փառատունին մասնակցել:

– Անտարակոյս, փառատունին մասնակցած բոլոր խմբերը, անհատ կատարողներն արժանի են երախտագիտության և խոնարհումի, բայցևայնպես կուզենայինք որևէ կողելտիվի, անհատ կատարողի անունը հնչեցնել առանձին:

– Ես կուզեի առանձնացնել Մարիաննա Շիրիլյանին: Նա հիասքանչ մարդ է: Ինքը մասնակցեց մեր փառատունին՝ իր ընտանիքի, ամուսնու հետ: Ամուսինը ջութակի աղեղի լարերն էր փոխում, երեխաները մասնակցում էին համերգներին: Կապանի արվեստի բոլեջում մի անտեսված դաշնամուր կար, ինքը հովանավորեց այդ դաշնամուրի նորոգումը: Տեսնեմ երեխաների մազերն էր հարդարում բեմ բարձրակարգ առաջ, այսինքն՝ բոլոր մանուկներին մայրություն էր անում և՛ հավաքարարություն, և՛ խոնարհություն: Ես Մարիաննա Շիրիլյանի հետ բախտ ունեցնելու կուզեի: Ծուրբերտի կվինտետը: Երբ նվագում էինք, բար լռություն էր դահլիճում: Երբ

ուներում էի խնդրներ, ասենք դաշնամուր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարը չէր բավականացնում, նրան էի զանգահարում, ինքն ինձ համար հոգեբան էր, հույս, կուլեգա, շատ դեպքերում՝ խստապահանջ մայր, որտեղ սխալներ էի անում, ինքն ինձ ուղղում էր: Մարիաննա Շիրիլյանն իմ թիկունքն էր, ինձ առաջնորդում էր, իմ հետևից գալիս և այսպես շարունակ:

– Փորձե՞նք մտնել Ձեր գաղտնիքների տիրույթ, ինչպե՞ս էք կարողացել համաշխարհային ճանաչում ունեցող այդ կատարողներին ընդգրկել ծրագրում և իրավիճել Կապան: Իսկապես, առաջին հայացքից անհավատալի բան է տեղի ունեցել, բայց տեղի է ունեցել: Խնդրեմ:

– Մարդիկ շատ են մտածում իրենց մասին: Ասում են՝ ինձ տվեք, ինձ տվեք, հետևաբար ոչ մեկը չի տալիս: Ես բոլորից ուզում էի, բայց ոչ ինձ համար: Թե՛ փառատունի ընթացքում, թե՛ ընդհանրապես կյանքում ինձ համար որևէ բան չեմ ուզել: Ես երիտասարդ եմ, առողջ և ուժեղ, ինձ համար ամեն ինչ ստեղծում եմ, իսկ հովանավորներից, բոլորից պահանջում էի դաշնամուրի գումար, որովհետև դա իմ դաշնամուրը չէր: Դա Կապանի համար

էր: Ես պահանջում էի ու ստիպում, որ մի լավ բան անեն Կապանի համար, և պիտի ասեմ, որ լավ գաղափարի համար բոլորը միավորվում էին: Ես համարում եմ, որ մեր գլխավոր հովանավորները մեր երաժիշտներն են: Ճանաչված երաժիշտ Անդրեյ Գրիգուրովը փոխանակ հոնոարա պահանջի և գա մի համերգի ժամանակ նվագի, ինքն անվճար մի համերգի փոխարեն տասը համերգի մասնակցեց, նվագեց: Մինչև կեսգիշեր և դրանից հետո բեմի վրա փորձ էր անում, բայց ժպիտը դեմքին: Ասել է թե՛՛ նա մեր հովանավորն էր: Երբ դու անում ես շատ լավ բան, բո շուրջը հավաքվում են շատ լավ մարդիկ:

– Վերադառնա՞նք սկիզբ, Ե՞րբ և ինչպե՞ս հղացավ Կապանում միջազգային փառատուն անցկացնելու գաղափարը:

– Ես շատ ակտիվ եմ, ինձ կարելի էր տեսնել Արցախում, այնտեղ էլ եմ փառատուն կազմակերպել, երևանում երաժշտական մրցույթներ ենք կազմակերպել: Փոքր տարիքից սովորություն ունեի քիթս ամեն տեղ խոթել: Մի բանի տարի առաջ, երբ այստեղ էի, հորեղբայրս՝ Միշա Ավանեսյանն ասաց, որ ինքը հետևում է իմ գործունեությանը և տեսնում, որ տարբեր տեղեր

Նացնել:

Փառատունը նաև դաստիարակչական նշանակություն ունեցավ. համերգներից բացի կազմակերպվեցին վարպետաց դասեր:



Այդ համերգները, համերգաշարերը, կատարումները, կարծում եմ, մեծ խթան կլինեն՝ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման առումով: Հետագայում, հուսով եմ, Կապանում ավելի մեծ ուշադրություն կդարձվի երեխաների, պատանիների ու աղջիկների երաժշտական դաստիարակությանը:

Տարբեր գործիքներ հնչեցին՝ կոնտրաբաս, ֆլեյտա, կլառնետ, ջութակ, այտ, գործիքներ, որոնք Կապանում այսօր պահանջարկ ունեն:

Կարևորում եմ նաև ոչ կապանցի երեխաների շփումը հանրապետության լավագույն երիտասարդ կատարող երեխաների հետ. հենց այդ համագործակցությունը՝ միա-

սին կատարելը, նվագելը, շփվելը բեմում, նաև կուլիսներում, բավականին մեծ խթան կարող են հանդիսանալ նրանց հետագա գործունեության մեջ:

Փառատունը ոչ միայն Կապանի համար էր կարևոր, այլև ամբողջ Սյունիքի համար. մարզի տարբեր բնակավայրերից էին հաճախում այդ համերգներին. Քաջարանից էին գալիս, Մեղրիից... Երաժիշտներ, երաժշտական դպրոցների տնօրեններ, դասատուներ, աշակերտներ...

Փառատունի առաքելություններից մեկն էլ «Steinwat D 274» ռոյալը որպես նվեր Կապանի հասցնելն էր. բոլոր այն երաժիշտները, ովքեր այսուհետ ելույթ կունենան քաղաքում՝ երգեհոնային դահլիճում, կհնչեցնեն նաև այդ ռոյալը:

Փառատունն ինքնին բազմաձև էր, դասական երաժշտարվեստի հետ զուգահեռ առկա էին ժողովրդական արվեստը, ջազային արվեստը, գեղարվեստական գրակա-

նությունը, բայց այդ ամենում գերակայում էր դասական երաժշտությունը:

Հանդիսատեսի մասին՝ Կապանը միշտ էլ առանձնացել է հանրապետությունում, և ոչ ոք չի կարող չհիշատակել հուլիսի 2-ին իրենց Երևանում ուզում են որևէ ծրագիր ներկայացնել հանրությանը, նախնական ունկնդրումը Կապանում էին անցկացնում: Եթե Կապանում ընդունվում էր, ուրեմն հանգիստ կարող էին մայրաքաղաքում ներկայացնել: Բայց և չմոռանալ՝ հանդիսատեսը մեկ կամ երկու օրվա ընթացքում չի ձևավորվում, դա տարիների աշխատանքի արդյունք է: Այդ գործում ծանրակշիռ լուրս է ունեցել և ունի արվեստի քույրը: Ի դեպ, Արցախյան 1-ին պատերազմի ընթացքում հրետակոծության ենթարկվեց քաղաքը: Այդ տարիներից սկսած՝ փայփայանքով և հոգատարությամբ քույրիկ կողակտիվս ամեն ինչ արեց՝ պահպանելու, այնուհետև վերանորոգելու դահլիճը:

Ինքը՝ հանդիսատեսն էլ շատ գոհ էր փառատունից, նրա արձագանքները՝ երաժիշտների ելույթներին, բավականին խոսուն էին, և երաժիշտները կարծիքներ հայտնելիս՝ բավականին բարձր գնահատեցին կապանյան հանդիսատեսին... //

ՄԵՐ ՀՅՈՒՐՆ ԵՐ ՆՈՐԱՅՐ ՔԱՐՏԱՇՅԱՆԸ, ՈՒՄ ԳԼԽԱՎՈՐԱԾ «ՄԵՆՈՒԱ» ԽՈՒՄԲԸ մասնակցում է կապանյան փառատունին

Սկզբը՝ էջ 9

լինել: Ասել է թե՛ զագային մշակույթը պահելու և զարգացնելու համար պետական հովանավորություն պետք է լինի, այլապես խնդիրներ կունենանք...

Դժվար է պատկերացնել, որ սիմֆոնիկ նվագախումբը, օրինակ, կարող է գործել առանց պետական դոտացիայի, և ոչ ոք մոտեցումը պետք է լինի մի շարք այլ խմբերի հանդեպ:

– Ենթադրում եմ՝ Ձեր գլխավորած խումբն էլ պետական հովանավորության կարիք ունի:

– «Մենուա» անսամբլը պետական աջակցություն կամ հովանավորություն չի ստանում, մեր գործունեությունը հիմնված է մարդկային նախաձեռնությունների վրա, և ես դա նորմալ եմ համարում: Ի վերջո, եթե հետադարձ հայացք ձգեմք, արվեստի ոլորտի շատ-շատ լավ գործեր հիմնված են եղել ու հիմնված են անհատների նախաձեռնության վրա: Երբ պետությունը չի կարողանում արժեհամակարգ ձևավորող խմբերին աջակցություն ցույց տալ, ապա ծնվում են անհատներ...

– Հասցնում եք մասնակցել փառատունների-մրցույթների՝ հանրապետության կամ աշխարհի մասշտաբով:

– Վերջին անգամ «Մենուա» խմբով ընտրվել եմ աշխարհի լավագույն 50 խմբերի մեջ. մասնակցում էինք գերմանացիների հիմնադրած «World music expo» ցուցահանդեսին: Դա 2018 թվականին էր:

– Ի՞նչ նախագծեր կամ ծրագրեր ունեք առաջիկա ժամանակաշրջանի համար:

– Եվ «Մենուա» խումբը, և իմ կողմից հիմնադրված «Վան» նախագիծը (հիմնադրված 2009 թվականին) դրսից հետ կապված բազմաթիվ ծրագրեր ունեն: «Վան» խմբում ունենք ոչ միայն գործիքային մաս, այլև երգիչ-երգչուհիներ: Խմբում սերնդափոխություն է տեղի ունեցել, և առաջիկայում սկսում եմ «Վան»-ի նոր նախագծի մեկնարկը:

– Փորձե՞ք եզրափակել մեր գրույցը՝ կապանյան Ձեր տպավորությունները լսելով:

– Հուլիսի 4-ից Կապանում եմ: Առաջին անգամ Կապանին ինձ գերել է դեռևս 1991-ին: Երևանի բարբառով չեն խոսում, ինքնատիպություն կա, ժողովուրդը բարի է, հյուրընկալ, ակտիվ մշակութային կյանք կա...

Այս օրերին մի քանի անգամ հավաքել եմ երիտասարդների, երեխաների, նաև երաժշտության ուսուցիչների խմբեր ու վարպետաց դասեր անցկացրել:

Կարծում եմ՝ նման դասերը չափազանց կարևոր են բոլոր այն բնակավայրերում, որոնք հեռու են մայրաքաղաքից: Նույնը՝ Սփյուռքի, Արցախի պարագայում:

Սիրում եմ մանկապարտեզներ, դպրոցներ այցելել և նվագել երեխաների համար, երեխաներին գործիքների հետ ծանոթացնել. դա իմ տարերքն է, փոքրիկներին ավելի շատ եմ սիրում, քան մեծերին:

Եվ, ի վերջո, Ջիվանին է ասում «Երկիրը ուսյալ զավակին է փայփայում մոր պես, անկիրթ ցեղերը թափառական՝ կուզան ու կերթան»: Սյունիքի հերոսական ժողովուրդն իր սպարած կյանքով ծանոթ է այդ իմաստությունը: Մեր հարևան անկիրթ ցեղերին նաև մշակութային գեներով պետք է դիմակայեք: Հենց այդ նպատակն է հետապնդում նաև Կապանի միջազգային երաժշտական փառատունը, որը, հիրավի, մեծ իրադարձություն է ոչ միայն Կապանի և Սյունիքի, այլև Հայաստանի մշակութային կյանքում:

ՀԱՐՑԱԾՈՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԷՍՍԱՆՅԱՆԻ 07.07.2023

բարի գործեր եմ անում, օգնում երաժշտական գործիքներ ձեռք բերելուն: Մի անգամ ասաց՝ բա ե՞րբ ես Կապանում մի բան անելու, Կապանը նաև քո տունն է: Մտածեցի՝ ճիշտ է ասում: Ես էլ պատասխանեցի, որ չեմ կարող Կապան գալ մի ջութակով կամ մի համերգով, ես այստեղ ծանրակշիռ, մնայուն մի բան պիտի անեմ: Առաջին ոգևորողն իմ հորեղբայրն է եղել: Նաև ասեմ եթե չլինեք հրաշալի ակուստիկա ունեցող երգեհոնային դահլիճը, այս ամենը չէիք անի: Հանդիպումներ շատ է եղել հայտնի մարդկանց հետ, ունեցել եմ մեծ զաղափարներ, բայց շատ դեպքերում պատասխանը «չէ»-ն է եղել: Անցյալ տարվա դեկտեմբերի 2-ին 20 րոպեանոց հանդիպում ունեցա Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանի հետ, ներկայացրի ծրագիրս՝ կազմակերպում եմ փառատուն, բերում եմ աշխարհի ամենալավ դաշնամուրը, ամենաբարձրակարգ երաժիշտներին, Դուք էլ մեզ ընդունում եք ամենալավ ձևով: Առանց վարանելու ասաց՝ համաձայն եմ: Մարդը երաժշտասեր է, բայց երաժշտագետ չէ: Ինքը գնահատեց դա, իրեն խոստացել էի 20 երաժիշտ, բայց եկավ 165-ը: Պատկերացնում եք, ինչ կրակը գցեցի մարդուն: Երբ նրան հայտնեցի, որ Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբն է գալիս, ասաց՝ Սևակ ջան, մեր քույրեն 20 երաժշտի համար է, բայց և այնպես բարձր մակարդակով սիմֆոնիկ ընդունելության արժանացավ: Ասացի՝ գալիս է ոչ թե երկու, այլ ութ դաշնակահար, մի խոսքով՝ ասածներս ժպիտով էր ընդունում և ընդառաջում: Մի խոսքով՝ Գևորգ Փարսյանն էր այս ամենի շարժիչ ուժը: Եթե չլինեք նա, մենք այստեղ կգայինք երեք հոգով, կունենայինք մի փոքրիկ համերգ և վերջ: Աշխարհում ոչ մի տեղ չեք գտնի սիրված քաղաքական գործիչ. Գևորգ Փարսյանը եզակիներից է...

– Կուզենայինք լսել այն մարդկանց, կազմակերպությունների անունները, ովքեր աջակցեցին Ձեզ՝ կազմակերպելու մեծամասշտաբ այդ փառատունը: Ի վերջո պահանջվում էին կազմակերպչական ջանքեր, ֆինանսական միջոցներ, 165 արվեստագետ երևանից Կապան հասցնելու և նրանց գործունեությունն ու կենցաղըն ուսուցող կազմակերպելուն միտված աշխատանքներ:

– Ծարունակեմ նախորդ հարցի պատասխանը: Եվ ես ու պարոն Փարսյանը մի հայտարարի եկանք, ձեռք սեղմեցինք և անցանք գործի, ինքն իր ուղղությամբ, ես՝ իմ, ճիշտ է 20 երաժշտի հաշվարկով: Ասացի՝ շուտով բերում եմ դաշնամուրը, սկզբից դանդաղ էր հանգանակության գումարը հավաքվում: Նստած մտորում էի՝ մի՞թե ծրագիրը տապալվելու է, դաշնամուրը չի լինելու, որը պիտի լինեք կապանցիների լվեր: Չանգեցինք Սանկտ Պետերբուրգում բնակվող ֆլեյտահար Սասուն Առաքելյանին՝ ասաց՝ 1000 եվրո իմ կողմից: Դա մեծ հույս ներշնչեց: Շատերը նաև թերահավատորեն մոտեցան մեր ծրագրին: Բայց Սասունն առաջինն էր, որ հավատաց այս ամեն ինչին, մեզ ոգևորեց, սկսեցինք հավատալ, որ մեր բռնած գործն ավարտին կհասնի:

– Կապանյան լսարանն էլ որբորդ անգամ դրսևորեց իր բարձր մակարդակը:



– Ըստ ամենայնի՝ փառատունը կդառնա ավանդական: Ճիշտ է, պարոն Գևորգ Փարսյանից վերջնականապես չեմ ճշտել, բայց երբ փակման արարողության ժամանակ ասում էի, որ կլինի երկրորդ, երրորդ փառատունը, տեսա ժպտում է, դա ինչ-որ բան ասում էր:



կը, երաժշտական աշխարհի հետ իր համերաշխությունը, գուցե մեկ անգամ ևս խոսենք Կապանի հանդիսատեսի մասին:

– Կապանի հանդիսատեսի մասին վաղուց էի լսել: Կապանը մշակութային քաղաք է, և բազում երաժիշտներ է տվել՝ Դանիել Երաժիշտ, Սասուն Առաքելյան, Սամվել Ավանեսյան և ուրիշներ: Բայց վերջին տարիներին հնչեղ անուններ, ասես, չեն լսվում: Կապանում գործում են արվեստի պետական քույր, երաժշտական դպրոցներ, բայց, կարծես, անտեսված է աշխարհի կողմից: Դա բոլորիս բացթողումն է, որը պիտի շտկենք և այդ նպատակով եմ այստեղ: Կապանի երաժիշտն ինձ համար և մեր երաժիշտների համար դարձավ ամենափրկիչ հանդիսատեսը: Եվրոպայում նման մակարդակի հանդիսատես չկա: Մենք կարողացանք հանդիսատեսին ցույց տալ, որ իրենք ավելի կարևոր են, և սկսեցին այդ ամենը գիտակցել, զգալ ու վայելել: Ինձ թվում է, որ հաջորդ փառատունին ևս կապանցի հանդիսատեսը նույնը կլինի՝ երաժշտասեր, բարեկիրթ և բաղաբավարի:

– Հայ հանրությունը Սևակ Ավանեսյանին ճանաչեց հատկապես 44-օրյա պատերազմի օրերին՝ Շուշիի Սուրբ Դավանչեցոց եկեղեցում ունեցած բացառիկ, հուզիչ ելույթով. այդ եկեղեցին արդեն վիրավոր էր, արդեն արյուն էր ծորում նրանից, բայց Դուք փորձում էիք սպեղանի դնել նրա վերջին, փորձում էիք հնարավորինս ամոքել: Զանի որ ուրիշ առիթ


չի եղել չափազանց հուզիչ այդ դիպվածը քննարկելու, ապա կուզենայինք՝ հետադարձ հայացք ձգել այդ նախաձեռնությանը:

– Այդ առիթով չեմ ուզում խոսել, ես թավջութակահար եմ, ունեմ իմ համերգային ծրագիրը, ինձ համար հաճելի է նվագել, երաժշտությամբ զբաղվել: Մեկ էլ հանկարծակի հայտնի եմ դառնում մեր պարտության պատճառով: Մեր տղաներից շատերը, ովքեր գոհվեցին, նրանց հակահանդեսները գիտեցի: Դա այդ օրերին պետք էր, որ ամբողջ աշխարհին ցույց տանք՝ մենք մշակութային ազգ ենք, իսկ մեր թշնամին՝ բարբարոս: Այդ օրերին պետք էր: Շուշիում նվագելն իմ կյանքի հազարավոր դրվագներից մեկն էր, և ամեն ինչ ուզում եմ անել, որ մարդիկ դա մոռանան: Ես շարունակում եմ նվագել և այսօր Կապանում եմ որպես փառատունի կազմակերպիչ: Որպես մեր պարտության խորհրդանիշ՝ չեմ ուզում հիշվել: Նաև վստահ եմ, որ մեր կորցրածը հետ ենք վերադարձնելու:

– Դուք վերադառնում եք մայրաքաղաք, Ձեր խոսքը կապանցիներին, սյունեցիներին: Զե՛ որ մեր ժողովուրդը պատմության դժվարին հանգրվանում է: Խնդրեմ:

– Նախ՝ ուզում եմ նշել, որ Կապանում շրջում եմ մեր հերոս տղաները: Մի մոռացեք, որ մենք այսպես հանգիստ նստած ենք սրճարանում՝ իրենց շնորհիվ: Մի անտեսեք մեր հերոսներին, ովքեր պահում են մեր հայրենիքի սահմանները: Իրենց արյունով է գծված մեր երկրի սահմանները, և նրանց շնորհիվ կարող ենք վայելել մեր անվտանգ կյանքը: Մենք էլ մեր գործունեությամբ և պահվածքով պիտի ցույց տանք, թե ինչի համար են իրենք կռվել: Ամենայն ուշադրություն ու հարգանք պիտի ցուցաբերենք կռված տղաներին: Դա իմ խնդրանքն է և հորդորը ողջ հայությանը և կապանցիներին, որովհետև այստեղով է անցնում առաջնագիծը: Թիկունքը պետք է ամուր լինի:

ԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԷՍՍԱՆՅԱՆԻ 15.07.2023 Թ.



ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏԻ ՆԱՄԱԿԸ ՍԱՄԿԵԼ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ՝ Սևակ Ավանեսյանի հորը

Սամվել ջան, Սևակի նվազը Շուշիի ավերակների վրա պատմական էր: Այն ինձ հիշեցրեց հետևյալ առասպելը. Չևսի գավակները՝ Չեթոսը և Ամփիոնը վերականգնեցին Թեբե քաղաքը: Ընդ որում՝ Ամփիոնի կիթառի աստվածաշնորհի հնչյունների ներքո ավերակների քարերն ինքնաբերաբար շարվում էին միմյանց վրա և ստանում նախկին փառահեղ տեսքը: Ահա այսպես, Սևակի «Կռունկի» հայրենաբաղձ հնչյունների մղումով վերհառնելու է նաև Շուշին: Եվ առհասարակ, Սևակն ու Յրաջյան դեռ շատ ավերակներ են վերականգնելու՝ սկսած մեր հարազատ Կապանի հոգևոր կյանքի վերածննդից:

Իմ երախտագիտությունը՝ ձեր հզոր օջախին: Ձեր օլիմպիական «հավաքակալի» հանդեպ ուզում եմ զգացմունքներս արտահայտել մեր նվազած մյուս երգի խոսքերով. «Թող համայն աշխարհի մեզ լավ իմանա, մենք հայերս կանք և պիտի մնանք»: Նաև ուրախ եմ, որ Սևակին և Ձեր ողջ գերդաստանին ուղղված իմ երախտագիտության խոսքը պիտի հնչի Կապանում, արձագանքվի Նժդեհաշունչ Խուստուփի լանջերին:

Սիրով ողջունում եմ Կապանի միջազգային երաժշտական փառատոնի մեկնարկը, կազմակերպիչներին և մասնակիցներին ու հղում իմ մաղթանքը: Ինչպես անտիկ երաժիշտ Ամփիոնն իր կիթառի հնչյունների զորությամբ վերականգնեց ավերված Թեբե քաղաքի վաղեմի փառքն ու գեղեցկությունը, այնպես էլ փառատոնի մասնակիցները՝ թող իրենց նվագով ու երգով վերականգնեն «նվազ տներ», են փլած սրտեր, են փլած զանգակատների դողանջները՝ հանուն ոգեկանության, հանուն մարդկության և մարդկայնության: Կուզենայի, որ իմ խոսքից հետո, որպես փառատոնի բնաբան, հնչեր և ցուցադրվեր Սևակի՝ Շուշիում նվագած «Կռունկը»:

Ինչպես Վահագն Ստամբուլցյանը Սանկտ Պետերբուրգից արբայական «Նորին մեծություն» երգեհոնը բերեց Կապան, այնպես էլ Սևակը՝ Կիենայից Կապան բերեց «Նորին մեծություն» ռոպայը: Կուզենայի, որ փառատոնի բացմանն այս երկու իրադարձության, երկու մեծագործության միջև զուգահեռ անցկացվեր և ըստ արժանվույն գնահատվեր: **04. 07. 2023 թ.**

ԿՈՐԵԼ Է «Բնապահպան-բնասերների ակումբ» 34-ի՝ գրանցման N 211.171.04292, վկայական N 03Ա 074487, կլոր կնիքը: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Միսիակի պետական տնտեսագիտական քոլեջի 2011 թ. շրջանավարտ Գրիգոր Միսիյանի Թաղևոսյանի դիպլոմը՝ AK097872, գրանցման համար 1149: Համարել անվավեր:

ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ՝ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում

Կապանում միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում, մարզկենտրոնի արվեստի թանգարանում հուլիսի 7-ին բացվեց երաժիշտ-շեփոհար Յայկ Գրիգորյանի նկարչական աշխատանքների ցուցահանդեսը, որը «Փոխակերպում» (տրանսֆորմացիա) խորագիրն էր կրում: Ցուցադրվում 20 կտավ էր, մի քանի գրաֆիկական և կերամիկական աշխատանքներ: Նկարելու ցանկությունը շեփոհարի մեջ ծնվեց 2019 թ. թագավարակի հետևանքով մեկուսացման, 44-օրյա պատերազմի և դրանով ածանցված անորոշության և ունայնության մթնոլորտում: Այդ դժվարին ժամանակներում նկարչությունը դարձավ փրկողակ, դարձավ ժամանակն ու հույզերն արտացոլելու միջոց:

Որոշակի իմաստով դժվար ընկալելի էին Յայկ Գրիգորյանի աշխատանքները, ուստի Կապանի արվեստի միջազգային փառատոնի հանրային կայքերի պատասխանատու Քնարիկ Ներսիսյանը բացման խոսքում որոշակի պարզաբանումներ ներկայացրեց:

Ինչպես «Այոնյաց երկրին» փոխանցեց Յայկ Գրիգորյանը, երաժշտությամբ զբաղվելուն զուգընթաց շարունակելու է նկարել և առայժմ մտադիր չէ «թարգել» այդ՝ համեմատաբար նոր ծնված նախասիրությունը: Նախօրեին Կապանի համայնքապետա-



րանի առջևի պլուրակում Յայկ Գրիգորյանի հետ տեղի ունեցավ բացօթյա ոչ ֆորմալ արվեստի գործողություն, որը ստեղծեց բնության և իրականության ալիքների համադրություն: Բացօթյա այդ վարպետաց դասը երկար կհիշեն մանուկները, քանզի ինքնաբերաբար էին ներկր հանձնում կտավին:

Յայկ Գրիգորյանը ծնվել է 1983 թ. Երևանում: 2004 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: 1999-2011 թթ. աշխատել է Յայաստանի պետական ռադիոյի և հեռուստատեսության նվագախմբում: 2011-2020 թթ. ապրել և աշխատել է Մոսկվայում: 2015-2020 թթ. աշխատել է Իզոր Բուտմանի ջազ նվագախմբում: Նվագել է մոսկովյան Esse, Kozlov club, Butman club ակումբներում, Լյու Յորքի Blue Note, Dizzy's club Coca-cola ակումբներում:

2020 թվականից հանդես է գալիս Նաև որպես նկարիչ, նրա կտավները ցուցադրվել են Մոսկվայում և Երևանում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
07.07.2023 թ.

Փառատոնի կազմակերպիչների ուղերձը

Սկիզբը՝ էջ 1
ցանկանում հայտնել պրն. Էռնեստ Բիթենրին՝ C. Bechstein Centrum Wien-ի ղեկավարին, ջանքի ու ըմբռնման համար: Գործիքն անզուգական վարպետության և գեղարվեստա-

կան արտահայտչականության խորհրդանիշ է, այդ, ու այն աշխարհի լավագույններից է: Այն իր նոր տունը գտավ Կապանի արվեստի պետական քոլեջում: Այս ձեռքբերման միջոցով մենք երաշխավորում ենք, որ համայնքի երաժիշտների և երաժշտասերների ապագա սերունդները տարիներ շարունակ կկարողանան վայելել նրա գեղեցիկ հնչողությունը:

Կապանի միջազգային երաժշտական փառատոնը նպատակ ունի հանրայնացնել բարձրակարգ երաժշտությունը և հարթակ

ծառայել ինչպես տեղացի, այնպես էլ արտասահմանյան երաժիշտների համար՝ ցուցադրելու իրենց տաղանդն ու կատարողական արվեստը: Մեզ են միացել անվանի երաժիշտներ ողջ աշխարհից, ովքեր, բացի իրենցից շատ սպասված ելույթներից, մեծ պատրաստակամությամբ հանձն են առել աշխատել մեր տաղանդավոր երեխաների և պատանիների հետ՝ վարպետության դասերի և աշխատարանների միջոցով՝ բոցավառելով ու թևեր տալով մեր երիտասարդ մտքին:

Այոնյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԳՐԱՏԱԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԳԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Ելույթները ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՈՎԱԾԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում
տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Այոնյաց երկրին» պարտադիր է: Թեմայի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1045, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.07.2023թ.: